

XVI<sub>1</sub>

561

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՆՐԵԱՆ

400

և

ՏԱՌԵՐԻ ԳԻՆԻ

1500

աճեայ

յՕԲԵՆԵԱՆԻ

յԻՆԱՏԱԿԻՆ

№ 10

Կրատ. փ. Ա. Բուրգուլեանի.

ԱԼԿՄԱՅԱՐԻ ≡

≡ ՈՍԿԻՆ



19 MAY 2005

8

U-95 ԱԿ. Արտիկ

2 NOV 2009

№ 10.

ՀՐԱՏ. ԲԺ. Ը. ԲՈՒԿՈՒԳԵՐՆԵՐ

№ 10.

2017

ԱԼԿՄԱՅԱՐԻ

ՈՍԿԻՆ

1002  
5972



1. Ժառանգություններ.
2. Կտակի գաղտնիքը.
3. Մահ-ան թիկերը.
4. Անհաւատարիմ ընկեր.
5. Ազնուութիւն.
6. Ո՞րն է իսկականը.
7. Ոսկէ նաւի գերեզմանը.
8. Ստորերկրեայ ոյժերը.
9. Մեծ գործ.
10. Բարոյական պարտքի գիտակցութիւնը:

Թ Ի Ք Լ Ի Ա

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆակայեա փող. № 6.

1914

# ՄԼԿՄԵԼՆԵՐԻ ՈՍԿԻՆ

(Վէպ Գ. Ստրոնգի)

I

## ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Վիլլեմ Վան-դեր-Տոյլսը և Եան Բլոկհուիզը մանկութիւնից ընկերներ էին, թէև նրանք խիստ տարբեր էին իրարից թէ արտաքինով և թէ հոգեկան կեանքով ու ընաւորութեամբ:

Վիլլեմը շէկ էր. նրա խոշոր գեղեցիկ աչքերը գորշ և կապոյտ գոյների ցոլք էին տալիս: Նա դէմքով աղջկայ էր նման. դիմագծերը նուրբ էին ու գեղանի:

Այդ դէմքը իսկապէս գեղեցիկ չէր, բայց ամեն մի նայող հաճելի տպաւորութիւն էր ստանում. նրա պարզ ու մաքուր հայեացքը անչափ մեծահոգութիւն, պարզամտութիւն և կամքի կորով էր արտայայտում. նրա ժպիտը համեստ էր ու խաղաղ, շարժումները՝ զուսպ:

Եանը Վիլլեմի կատարեալ հակապատկերն էր. նա սև էր, կարճահասակ, նիհար, բայց ջղոտ: Նրա սև մազերն ու աչքերը, խիտ յօնքերը, արծաաքիթը, որ գիշակեր թռչունի կտուցի էր նման,

սև բեղերը, դուրս ցցած կարմիր շրթունքները նրա կրքոտ խառնածքն ու բնաւորութիւնն էին ցոյց տալիս:

Վիլլեմը հասարակ էր հագնւում, Եանը՝ ճաշակով. մէկէն նայողը կատէր, որ Եանը գեղեցիկ տղամարդ է. բայց ուշադիր դիտողը կը նկատէր նրա դէմքի և աչքերի մէջ բուռն կրքերի կնիքը, գեղեցիկ շրթունքների հեգնական, աւելի ճիշտ, չարախնդաց ժպիտը և ջղային շարժումները, և խօսք չկայ, որ աննկատելի կերպով կը հիասթափէր Եանի նկատմամբ:

Միայն Վիլլեմն էր, որ չէր նկատում այդ և միշտ բարեացակամ էր դէպի նա:

Երբ մարդիկ մանկութիւնից, տարիներ շարունակ ապրում են միասին, նրանք այնքան են ընտելանում իրար, որ չեն նկատում իրար մէջ այն փոփոխութիւնները, որ ժամանակի ընթացքում կատարւում են աստիճանաբար:

Եւ իրօք, Վիլլեմի ու Եանի բարեկամական յարաբերութիւնները երկար տարիների գործ էին. նրանք դեռ դպրոցում էին իրար մտերմացել: Վիլլեմը ամեն բանում օգնում էր Եանին. երբեմն յանդիմանում էր ծոյլ ընկերոջը. բայց շատ անգամ էլ անզուսպ ընկերոջ գործած շարութիւնները իր վրայ էր առնում և փրկում նրան:

Սակայն նրանց յարաբերութիւններն այնպիսի կերպարանք էին ստացել, որ թւում էր թէ, ոչ թէ Վիլլեմն էր պաշտպանում և հովանաւորում Եանին, այլ, ընդհակառակը, Եանն էր աւելի

ընդունակութեամբ օժտւած և իրաւունք ունէր ցուցմունքներ տալու համեստ ընկերոջը:

Ի պրոցական շրջանից յետոյ կեանքը գործունէութեան տարբեր ուղիներ գծեց նրանց համար. մեծ քաղաքը բաժանեց նրանց:

Պատահում էր, որ ամիսներով իրար չէին տեսնում, բայց բարեկամական յարաբերութիւնները շարունակւում էին:

Երկու տարի առաջ Վիլլեմը գնաց Անգլիա գործնականապէս սովորելու անգլիերէն լեզուն և անգլիացիների մօտ աշխատելու: Պապի հիւանդութիւնը ստիպեց նրան վերադառնալ Ամստերդամ, ուր գտաւ և Եանին: Վիլլեմը իր պապի միակ թոռն էր և ժառանգը:

Թէ ինչ էր անում Եանը այդ երկու տարւայ միջոցին՝ Վիլլեմին յայտնի չէր. գիտէր միայն, որ Եանը ինչոր մեծ ձախորդութիւններ էր ունեցել, ոչ մի ծառայութեան մէջ երկար չէր մնացել, կամեցել էր Եաւա կղզին գնալ, և այն՝ որ մի ժամանակ նիւթական շատ նեղ գրութեան մէջ է եղել: Վերջին հանգամանքը այնքան էլ հասկանալի չէր Վիլլեմի համար, որովհետև գիտէր, որ Եանը լաւ գործ ունէր և եթէ մի տեղից դուրս էր գալիս, շատ հեշտութեամբ մի ուրիշ պաշտօն էր գտնում: Եանը ընտանիք չուներ. նրա վաստակը լիովի կարող էր բաւականութիւն տալ կուլտուրական մարդու անհրաժեշտ պահանջներին:

Այն ինչ Եանը շարունակ գանգատում էր իր անբախտութեան վրայ, որ չքաւոր է, նոյն իսկ երբեմն քաղցած է մնում:

Այդ առթիւ մի անգամ Վիլլեմը, որ խոստացել էր նրան նիւթապէս օգնել, մի անզգոյշ հարց տւեց:

Եանը կնճռտուեց և կծու պատասխանեց.

— Երևի կարծում ես, թէ մի քանի կոպէկներով, որ ես ստանում եմ, կարելի է տանելի կեանք վարել:

— Բայց, Եան...

— Ո՛չ մի «բայց»: Բացի դրանից աշխարհը լի է ստոր մարդկանցով, որոնք աշխատում են խաբել իրենց վստահած մարդուն: Ես կարթն ընկայ. խիստ տուժեցի, որ հաւատացի անարժան մարդկանց. դժւարութեամբ ազատեցի. և այժմ էլ դեռ ծանրանում է իմ վրայ յիմարութեանս արդիւնքը: Ահա այդ է իմ չքաւորութեան պատճառը:

— Պարտքերդ:

— Ի հարկէ: Ի՞նչ պարտք չունես, որովհետեւ խիտնջի կեանք ես վարում: Իսկ իմ բնաւորութիւնն ուրիշ է: Քո ամեն բանը չափած ու ձևած է. իսկ ես չեմ կարող ծախսելիք ամեն մի կոպէկը հաշւի առնել: Ի՞նչ համարեա մարդկանց չես տեսնում, իսկ ես միշտ շփման մէջ եմ. և այդ կապւած է որոշ ծախսերի հետ, որը քեզ անյայտ է:

Ի հարկէ, ես պարտք ունեմ. բայց ինչո՞ւ սարսափով ես նայում ինձ վրայ. կարծես մահացու մեղք եմ գործել, եթէ մի երկու հարիւր ուռւլի պարտք եմ արել մի վաշխառուից:

Քո արիւնը ձկան արեան նման սառն է. իսկ ես տաքարիւն եմ. ի՞նչ անեմ որ այդպէս եմ ծնւած:

Երկու ընկերների բնաւորութեան և խառնուածքների տարբերութիւնն աւելի խիստ երևան եկաւ Վիլլեմի պապի հիւանդութեան և մահւան օրերին, երբ աշխատում էին կտակը հաստատել տալ, որ Վիլլեմը ժառանգութեան կատարեալ տէրը դառնար:

Վիլլեմը, որ օրինաւոր և անվիճելի ժառանգըն էր, համակւած էր վշտով և շատ քիչ էր մտածում ժառանգութեան մասին:

Նա եօթ տարեկան էր, երբ զրկւեց ծնողներից և կատարեալ որբ մնաց. նա անկեղծ սիրում էր պապին, որը փոխարինում էր նրա ծնողներին. պարզ է, թէ սրբան վիշտ պիտի պատճառէր նրան պապի մահը, և այդ էր, որ չէր թողնում նրան մտածել գործերի մասին:

Եանը ոչ մի առնչութիւն չունէր այդ գործի հետ, բայց և այնպէս չափազանց հետաքրքրւում էր նրանով... Նա վրդովւում էր, նոյն իսկ կրքոտ մասնակցութիւն էր ցոյց տալիս այդ գործում, դրդում էր ընկերոջը՝ ուժեղ ու համարձակ գործել ստանալու ժառանգական իրաւունքները:

Կողմնակի դիտողին կարող էր թւալ, թէ իսկական ժառանգը Եանն էր և ոչ Վիլլեմը:

Եանը նոյն իսկ ստիպում էր ու համոզում ընկերոջը պապի թողած կտակը կարգալ իր ներկայութեամբ, թէև պապը յայտնել էր, որ օտարների համար կտակը պիտի գաղտնի մնայ, քանի նա չի իրագործւել:

— Դէհ, ի՞նչ կայ որ, միթէ չե՞ս հաւատում ինձ, բարձր կարգա, — անհամբեր ձայնով ասում էր Եանը:

Թւում էր, որ նա հենց էս է նրա ձեռքից կը խլէ կտակը և արագ աչքի կանցկացնէ, որ շուտ իմանայ, թէ ի՞նչ կայ այնտեղ:

— Կարգան, դէ, կարգան, խնդրում եմ, — ասաց նա մի անգամ էլ խռպոտ ձայնով:

Վիլլեմը, որ սկզբում հակառակ էր, և այդ բանը կտակողի կամքին դէմ էր համարում, վերջը համաձայնեց, ընդունելով, որ Եանը իբրև հաւատարիմ ընկեր կարող է իրենց ընտանիքի մի անդամը համարւել:

— Իսկոյն, — պատասխանեց Վիլլեմը և սկսեց բարձրաձայն կարգալ:

II

Կ Տ Ա Կ Ի Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Ը

«Յանունն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, ամէն, — այսպէս էր սկսւում Վիլլեմ Վան-դեր-Յոյլպի կտակը:

Քեզ եմ յանձնում, իմ սիրելի թոռ և միակ ժառանգ Վիլլեմ, իմ ամբողջ կարողութիւնը, որ հաւաքել եմ անասելի աշխատանքով, զրկանքներ կրելով, շատ անգամ ամենամահաժեշտ պահանջներին բաւարարութիւն չըտայով:

Դեռ մի քանի տասնեակ տարի սրանից առաջ, երբ հայրդ մանուկ էր, ես այնքան կարողութիւն էի հաւաքել, որ կարող էի այլևս չ'աշխատել և ապրել թէև համեստ, բայց ապահով:

Բայց ես այդպէս չը վարւեցի և չէի կարող վարւել, որովհետև դրանով կը քանդէի իմ պաշտելի հօր, և քո հօր պապի՝ Եան Վան-դեր-Յոյլպի ուխտը, որը իր ամբողջ կեանքը նւիրել էր մի սուրբ-գործի:

Իմ հայրը, Եան Վան-դեր-Յոյլպը բնիկ, ամասերդամցի էր. նա այն մարդկանցից մէկն էր, որոնց վիճակած է փոթորկալի ու արկածներով լի կեանք վարել, թափառել երկրից երկիր:

Նա աղքատ ծնողների զաւակ էր և ամբողջ հոգով ու սրտով պատկանում էր Հոլլանդացու փառքը համարւող նաւաստիների դասակարգին: Նրա հայրը հասարակ նաւաստի էր. ինքն էլ իբրև հասարակ նաւաստի ծառայում էր Հոլլանդական առևտրական նաւատորմի մէջ, թէև իր գիտութեամբ և ծովային գործերի մէջ ունեցած հմտութեամբ կարող էր արագ առաջ գնալ և մեծ դիրքի ու պաշտօնի հասնել:

Եթէ բախտը նրան «Ալկմահար» պատերազ-

մական նաւը չը ձգէր, հաւանական է, որ նա իր համար մի ապահով դիրք կը ստեղծէր:

Սակայն բախտը այլ կերպ էր տնօրինել:

Այդ այն փոթորկալի ժամանակն էր, երբ Անգլիան ու Ֆրանսիան կռիւներ էին մղում, թէ ով պէտք է իշխէ ծովերի վրայ:

Հոլլանդիան՝ հակառակ իր կամքի՝ այդ կռիւ մէջ մտաւ և պաշտպանեց Ֆրանսիային՝ Անգլիայի դէմ:

Մեր հայրենիքի ծովափերը այն աստիճան լաւ էին պաշտպանւած, որ Անգլիան չէր կարող զնասել նրան. սակայն նոյնը չէր կարելի ասել մեր հարուստ գաղութների նկատմամբ. այդ լաւ գիտէր Անգլիան և հենց այդտեղ էլ սկսեց հարւածել մեզ:

Անգլիայի ուշադրութիւնն առանձնապէս գրաւեց Յաւա կղզին, որ անթիւ հարստութիւն էր տալիս Հոլլանդիային:

Ով տիրէր կղզու գլխաւոր քաղաքին՝ Բատաւիային, նա տիրած կըլինէր կղզու ամենակարեւոր մասին: Իրա համար էլ անգլիացիք ամեն կերպ աշխատում էին տիրել այդ քաղաքին: Անմիջապէս քաղաքին տիրել նրանք չկարողացան, ուստի պաշարեցին նաւահանգիստը, որպէսզի այդպիսով ստիպեն անձնատուր լինել:

Բատաւիայի գանձարանում նահանգապետի պատասխանատուութեան տակ անագին հարստութիւն կար թէ ոսկեղրամով և թէ ոսկու կտոր-գանգաւածներով: Այդ բանը յայտնի էր անգլիա-

ցիներին, որոնք ամենից աւելի ձգտում էին ձեռք ձգել այդ գանձը:

Բատաւիայի նահանգապետն ևս լաւ էր հասկանում, թէ ինչ ոյժ ու օգուտ կ'ստանային անգլիացիները, եթէ տիրէին քաղաքին. դրա համար էլ ամեն միջոց ձեռք էր առնում ազատել այդ առասպելական չափերի հասնող գանձը:

Բատաւիայի նաւահանգստումն էր գտնուում առևտրական «Ալկմահար» նաւը, որ այդ ժամանակ պատերազմական նպատակների էր ծառայում:

Նահանգապետը երկար դիմադրելոց յետոյ՝ երբ տեսաւ, որ քաղաքը այլևս չի կարող դիմադրել պաշարման, ուզեց գոնէ գանձն ազատել, չը թողնել որ այն թշնամու ձեռքն ընկնի:

Նա կարգադրեց գանձը փոխադրել «Ալկմահար» նաւը, որը օգտուելով մի մութ ու փոթորկոտ գիշերից՝ գաղտագողի դուրս եկաւ ծով: Սակայն թշնամին նկատեց և սկսեց հալածել:

«Ալկմահարը» լուրջ զնասւածքներ ստացաւ և եթէ թշնամու ձեռքը չ'ընկաւ, պատճառը փոթորիկն էր, որ կռուող նաւերին շարտեց գանազան կողմ և վերջ դրեց կռիւն:

Ազատուելով թշնամուց «Ալկմահարը» ընկաւ փոթորկի գիրկը և տարւեց, մինչև այժմ ոչոք էլ չը գիտէ թէ ուր:

Հոլլանդական կառավարութիւնը այդ ժամանակ կռուով զբաղւած լինելով, կորցրած նաւը փնտրել չէր կարող. պատերազմից յետոյ միայն

հետախուզումներ-եղան, որոնք սակայն ոչ մի հետեանքի չը հասցրին:

Շատ տարիներից յետոյ միայն միսիոնար-ներից մէկը Սոււմատրա կղզում հոլլանդական ար-շաւախմբին յայտնում է, թէ այս-ինչ վայրենի-ների մէջ կայ մի սպիտակամորթ գերի, որը պէտք է որ նաւաստի լինի: Արշաւախմբին մի կերպ յաջողում է վայրենիների ձեռքից ազատել այդ եւրոպացուն:

Այդ մարդը «Ալկմահարի» նաւաստիներից մինն էր, Եան Վան-դեր-Յոյլպը՝ իմ հայրը, որ է՛քո պապի հայրը, իմ սիրելի Վիլլեմ:

Նրա պատմելով՝ «Ալկմահարը» կրակադուռ կղզու մօտ խորտակւում է փոթորկի հարւածից և կուլ գնում ջրին. ազատւում են միայն մի քա-նի հոգի շնորհիւ այն բանի, որ նաւը շատ մօտ է լինում կղզու ափին: Դրանց մէջ է լինում և Եան Վան-դեր-Յոյլպը:

Թէև դրանք ազատւում են ձկներին կերա-կուր դառնալուց, բայց գերի են ընկնում վայ-րենիների ձեռքը, որոնք ծախում են դրանց մի տեղացի իշխանի. վերջինս ստիպում է եւրոպա-ցիներին աշխատել Սոււմատրայի ճահճոտ վայ-րերում, բայց նրանք չկարողանալով տանել այն-տեղի կլիման, մէկը միւսի յետևից մեռնում են:

Միայն Եան Վան-դեր-Յոյլպն է կենդանի մնում շնորհիւ իր երկաթէ առողջութեան:

Նա էլ, ինչպէս պատմեցի, ազատւում է և գալիս Եւրոպա: Նրա ասելով նաւը խորասուզ-

ւել է ամիին շատ մօտ, այնպէս որ կարելի է, թէև դժւարութեամբ, այդ գանձը ձեռք ձգել:

Նա իր հետ բերել է կղզու մակարդակը, ուր ամենայն ճշտութեամբ ցոյց է տւած նաւի խորտակման տեղը: Սակայն մարդիկ չեն հաւա-տացել, և ոչ ոք չի ձեռնարկել գնալու և գրտ-նելու այդ գանձը: Դա իհարկէ մի մարդու գործ չէ. դրա համար հարկաւոր են մեծ թւով մար-դիկ և խոշոր գումար:

Պատմութիւնս լրացնելու համար ասեմ, որ ոչոք չի օգնել Եան Վան-դեր-Յոյլպին ոչ փո-ղով և ոչ մարդկանցով՝ գտնելու այդ գանձը, թէև նա դիմել է և կառավարչական և մասնաւոր հաստատութիւնների ու մարդկանց: Իսկ ինքը չի ունեցել անհրաժեշտ գումարը մի այդպիսի դժւար գործ ձեռնարկելու համար:

Երբ ես՝ քո պապդ, մեծացայ, իմ հայր Եան Վան-դեր-Յոյլպը, ինչպէս ասում են, իր դարն արդէն անց էր կացրել, յոգնել ու տանջ-ւել էր և համարեա գժի համբաւ էր ստացել:

Նրա օրերին, Նապոլէոնեան պատերազմնե-րը երկիրը քարուքանդ էին անում, ժողովուրդը, առանձնապէս աշխատաւոր դասակարգը, տագ-նապալից օրեր էր անցկացնում. սակայն նրա անբաժան ընկեր՝ տարափոխիկ հիւանդութիւնը իր թևերը տարածել էր երկրի վրայ և անթիւ գո-հեր էր խլում: Եան Վան-դեր-Յոյլպի աչքի առ-ջև քաղցից մեռնում էին իրա զաւակները, ազգականներն ու բարեկամները. առանձնա-

պէս թշուառ դրութեան մէջ էին նաւաստիների ընտանիքները:

Պատերազմի թշուառութիւններին հետեւեց գործազրկութիւնը: Երբ առաջ եկան շոգենաւերը, շատ նաւաստիներ զրկւեցին աշխատանքից, որովհետև շոգենաւերում այլևս բանւորների այն պահանջը չկար, ինչ որ առագաստաւոր նաւերի մէջ:

Ահա այդ սև օրերին «Ալկմահարի» նաւաստիի գլխում մի միտք յղացաւ.— Ամեն միջոց գործ գնել ու ծովի յատակից հանել այն գանձը և գոնէ նրա կիսով մի ապաստարան շինել զառամեալ ու որբ նաւաստիների համար:

Երբ մեռաւ Եան Վան-դեր-Յոյլպը, այդ գործը ինձ՝ իր որդուն յանձնեց:

Ես որոշեցի գործին մօտենալ ուրիշ կողմից, չըդիմել ուրիշի օգնութեան, այլ սեփական միջոցներով գլուխ բերել այդ:

Իրա համար հարկաւոր էր փող, և ես էլ աշխատեցի փող հաւաքել: Անցան տասնեակ տարիներ, մինչև որ ես կարողացայ աղքատ դրութիւնից դուրս գալ. անցաւ նոյնպէս մի քանի տասնեակ տարի և ես կատարեալ հարուստ դարձայ: Սակայն մինչ այդ ես էլ ծերացայ, ոյժերս պակասեցին. պարզ է, որ թէև փողը կար անհրաժեշտ չափով, բայց գլուխ կանգնել մի այդպիսի երկար ճանապարհորդութեան, զանազան կլիմաներ տանել և նեղութիւններ քաշել ես չէի կարող:

Ես փողը հաւաքեցի. և գոհ էի, որովհետև յոյս ունէի, որ այդ գործը գլուխ կը բերէ իմ որդին. սակայն բախտի չար խաղով նա գոհ զնաց վարակիչ հիւանդութեան: Իմ դրութիւնը բարորովին յուսահատական կը լինէր, եթէ դու էլ չը լինէիր. իսկ ուրիշին յանձնել այդ գործը ես չեմ կարող, դա անմիտ բան կը լինի և չի հասցնի նպատակին:

Ուրեմն, սիրելի թոռս, իմ միակ յոյսը դու ես: Դու շատ առողջ մեծացար, ունես կամքի ոյժ և լուրջ բնաւորութիւն: Բո մէջ ես չեմ նկատել ոչ թեթեամտութիւն և ոչ սէր-դէպի փողը: Իրա համար էլ բո նախնիքների այդ պատւէրը յանձնարարում եմ քեզ. գիտեմ, որ սրբութեամբ գլուխ կըբերես այն:

Երբ Աստուած յաջողէ, հասնես նպատակիդ, այսինքն՝ գանձը ձեռք բերես, նրա մեծ մասը կընւիրես թշուառ նաւաստիների համար ապաստարան շինելուն:

Միւս թերթի վրայ ճիշտ նշանակւած է նաւի խորտակման, հետևաբար և գանձի տեղը: Այժմ մնաս բարով. պապդ զգում է, որ մօտ է մահւան ժամը և գրիչը դէն է ձգում, վերջին պատւէրը տալով քեզ:

— Աշխատիր, եղիր ազնիւ, յարգիր Եան Վան-դեր-Յոյլպի յիշատակը, կատարիր նրա կամքը, ինչպէս ես կատարեցի՝ ամբողջ կեանքս նւիրելով այդ սուրբ նպատակին»:

Այստեղ Վիլլեմի ձայնը կտրւեց և նա լռեց:

— Ինչո՞ւ կանգնեցիր, — անհամբեր բացական-  
չեց Եանը: — Կարդա՛ վերջացրու, կարդա՛, որտե՞ղ  
է գտնուում գանձը: Տուր ինձ թուղթը:

— Ո՛չ, ես իրաւունք չունիմ ցոյց տալու քեզ  
այս թուղթը, — ասաց Վիլլեմը հանդարտ, բայց  
վճռական կերպով: Դա պապիս կամքն է. անա  
ինչ է գրում նա շարունակութեան մէջ:

«Ներդմնեցնում եմ քեզ այն ամենով, ինչ  
սուրբ է քեզ համար՝ քո մօր յիշատակով, իմ  
դէպի քեզ տածած սիրով, որ ոչ ոքի ո՛չ մի  
խօսք չասես, թէ ո՞ւր է գտնուում գանձը, մինչև  
որ ինքդ չես հասնի այնտեղ. հակառակ դէպ-  
քում գանձը կ'ընկնի ուրիշի ձեռքը և քո պատ-  
ճառով չի կատարւի նախնեացդ պատւէրը»:

— Էլ չկայ, — հարցրեց նորից Եանը՝ ձեռքը  
մեկնելով դէպի թուղթը:

— Ո՛չ, էլ չկայ, — պատասխանեց Վիլլեմը. — եւ  
ես կը կատարեմ պապիս պատւէրը: Այս ասելով  
նա թուղթը ծալեց և դրեց գրպանը:

— Ուրեմն ինձ չե՞ս վստահում, — վրդովեց  
Եանը:

— Ինչպէ՞ս չէ: Բայց ես պարտական եմ  
սրբութեամբ կատարել պապիս կամքը:

— Չէ՞ որ ես և դու մտերիմ ընկերներ ենք,  
մի հոգի և մի մարմին: Ես կըզամ քեզ հետ  
մինչև աշխարհի ծայրը, կ'օգնեմ քեզ գանձը  
գտնելու:

— Իրա՞ն, ասաց Վիլլեմը: Ես ուզում էի  
այդ բանը առաջարկել քեզ, բայց չէի վստահա-

16  
17

նում, որովհետև այդ գործը խիստ դժւար է և  
վստահաւոր: Ես չէի իմանում, թէ դու կըհա-  
մաձայնես օգնել ինձ:

— Աստուած վկայ, դու ինձ վերաւորում ես,  
Վիլլեմ, — բացականչեց Եանը բռունցքով կրծքին  
խփելով: Ո՛չ, Աստուածս վկայ, այդ ինձ համար  
շատ ու շատ վերաւորական է:

Վերջապէս Վիլլեմին յաջողեց մի կերպ  
հանգստացնել իր դիւրագրգիռ ընկերոջը, որը  
դադարեց թուղթը խնդրել, և երկուսով սկսեցին  
իրենց ապագայի ծրագիրը կազմել: Առ այժմ  
մօտաւորապէս այս որոշման եկան՝ թողնել իրենց  
ծառայութիւնները և մշակել Հնդկաստան գնա-  
լու ծրագիրը:

Մի քանի օր անց, Վիլլեմը գնաց իրենց  
բարեկամ նոտարի մօտ և իր ամբողջ գոյքի կա-  
ռավարութիւնը յանձնեց նրան:

Նոտարը, որ այդ ընտանիքի անկեղծ բարե-  
կամն էր և վայելում էր ամենքի յարգանքն ու  
վստահութիւնը, յայտնեց Վիլլեմին, որ ինքը  
թէև չըզիտէ նրա պապի ծրագրի մանրամասնու-  
թիւնները, բայց նրան լաւ ճանաչում էր, գիտէ,  
որ այդ մարդը ազնիւ էր և մտածում էր ուրիշների  
բախտաւորութեան մասին, այդ պատճառով հա-  
ւաքել էր անագին փող մի ձեռնարկութիւն գր-  
լուի բերելու, որին հասարակական մեծ նշանա-  
կութիւն էր տալիս:

Ծերունի և փորձառու նոտարը  
թէ Վիլլեմին ուղեկցելու է Եանը, խորհուրդ



տւեց զգոյշ լինել և չըվստահիլ ու չըհաւատալ իրա ընկեր Յանին, որին նոտարը թէև չի ճանաչում և որի դէմ անձնապէս ոչինչ չունի, սակայն իրա՝ նոտարի աչքում լաւ մարդ չի երևում: Առանձնապէս խորհուրդ տւեց զգոյշ լինել օտար երկրում ճանապարհորդելիս:

Վիլեմը յայտնեց, որ ինքը անվերապահ հաւատում է Յանին և նրան իր հարազատ եղբայրն է համարում, և որ հենց վաղն և եթ ճանապարհ են ընկնելու դէպի Յաւա կղզին:

Այդ ասելով Վիլեմը շնորհակալութիւն յայտնեց նոտարին և մնաս բարև ասելով դուրս եկաւ նրա գրասենեակից: Ներքին մի զգացմունք թոյլ չտւեց Վիլեմին նոտարի հետ ունեցած խօսակցութիւնը յայտնելու Յանին:

Միւս օրը Վիլեմն ու Յանը ճանապարհ ընկան դէպի հեռաւոր արևելք՝ «Ալկմահարի» ոսկէ գանձը որոնելու:

III

ՄԱՀԻԱՆ ԹԵԻՆԵՐԸ

Ալբատրոս նաւը մօտենում էր հնդկական ափերին: Նրա ղեկավարը միջակ տարիքի, բարձրահասակ, համարձակ դէմքով մի նաւաստի էր. նրա դիմագծերը թէև խիստ էին, բայց ունէին առանձին գեղեցկութիւն, կարծես բրոնզից թափւած լինէին:

Նրան «Ծովային գայլ» էին կոչում. իսկական անունը Ֆրէդ Ծտիւրմեր էր: Նա անչափ սիրում է իր նաւը, և դա ունէր իր պատճառները:

Ծտիւրմերը շնորհիւ իր հաստատուն կամքի և համարձակ բնաւորութեան շատ շուտ առաջ գնաց իր ասպարէզում. նրան յաջողեց մեծ օգնութիւն ցոյց տալ անգլիացի մի միլիոնատէրի և նրա միջոցներով իր ճաշակի համեմատ շինել տւեց Ալբատրոս նաւը:

Ալբատրոսի շինւածքը չէր համապատասխանում ժամանակի գիտութեան և տեխնիկայի պահանջներին: Ծտիւրմերը՝ հակառակ վարպետների և ինժեներների գիտական ցուցմունքներին և ծրագրին՝ յանդգնութիւն ունեցաւ իր նաւի համար ընդունել մի անգլիացի գիտնականի հրնարած մեքենաները: Այդ գիտնականի կարծիքով, որ քաղցից մեռաւ Լոնդոնում, նրա մեքենաները, շնորհիւ իրենց ուրոյն կազմի, պէտք է անագին շոգեշարժ ոյժ առաջ բերէին ամենաքիչ վառելիք պահանջելով: Սակայն ժամանակին, ինչպէս ասացինք, այդ գիտնականին չըգնահատեցին:

Բայց երիտասարդ նաւաստին ընդդէմ գնաց ընդունւած կարծիքներին, գործադրեց իր նաւում այդ մեքենաները և քսան տարով առաջ անցաւ իր ժամանակից:

Այն օրից, երբ Ալբատրոսը առաջին անգամ ծով իջաւ, անցել էր քառորդ դար: Այդքան ժամանակայ ընթացքում նա տեսել ու կրել էր անթիւ արկածներ, եղել էր երկրագնդի բոլոր

գօտիներում, իր դրօշակը ցուցադրել էր աշխարհի բոլոր նշանաւոր նաւահանգիստներում և ստացել էր համաշխարհային հռչակ:

Ալբատրոսի օգնութեամբ Շտիւրմերը անագին կարողութիւն էր դիզել, ապահովել էր իր ընտանիքը և կարող էր իր գործերին վերջ տալ և հանգիստ ու խաղաղ ապրել՝ յարգւած ամենքից: Բայց Շտիւրմերը ամբողջ էութեամբ սիրում էր ծովը. նրա համար շատ ծանր էր բաժանւել իր Ալբատրոսից, և նա շարունակում էր թափառել ծովերն ու ովկիանոսները ոչ թէ կարիքից ստիպւած, այլ այն բուռն ցանկութիւնից, որ մղում էր նրան դէպի արկածները:

Այդ էր պատճառը, որ Ալբատրոսը չէր նրմանւում սովորական առևտրական նաւերին, և չէր ենթարկւում նրանց կանոններին, այլ պատուում էր կապուտակ ծովի երեսն այն թափով և ուղղութեամբ, ինչպէս նրա ղեկավարի ազատ կամքն էր թելադրում:

Նաւագնացութեան մէջ ընդունւած է, որ երբ մի նաւ փոթորիկից ազատւում է, կարող է իր ընթացքը շարունակել և ուշք չըզարձնել այլ խորտակող նաւերի վրայ, եթէ ի հարկէ նաւի կամ մակոյկների մէջ մարդիկ չի տեսնում ջրի երեսին ծփալիս:

Շտիւրմերը չէր հնազանդւում այդ կանոններին և ամեն անգամ, երբ դէպքը բերում էր ներկայ գտնւելու նման արկածների, միշտ շեղւում էր իր ճանապարհից և գնում դէպի

խորտակող նաւը՝ թէկուզ այնտեղ ոչ մի մարդ տեսած չըլիսէր:

Ալբատրոսը հենց նոր էր փոթորկի տագնապից անցել, երբ հեռւում նկատւեց խորտակւած նաւի բեկորներ:

Շտիւրմերը ըստ իր սովորութեան ուղղեց նաւի ղեկը դէպի այն կողմը: Կարճ ժամանակից յետոյ նրանք հասան բեկորներին, որոնց արանքում տեսան մի կիսախեղդ մարդ, որ լողում էր ջրի երեսին, խցանափայտէ օղակի օգնութեամբ: Հինգ ըոպէից յետոյ նրան ջրից դուրս բերին նաւ, ուր նաւաստիներին յաջողեց ուշքի բերել խեղդւողին, որի դրութիւնը ծանր էր այն պատճառով, որ գլխին ծանր հարւածից մի մեծ վէրք ունէր:

Շտիւրմերը, որին խեղդւողի դէմքը կարծես ծանօթ էր երևում, աւելի հետաքրքրւեց նրա կեանքով և պատմել տւեց նրան, թէ ով է և ինչպէս է ընկել այդ դրութեան մէջ:

Խեղդւողը յայտնեց, թէ ինքը Վիլլեմ Վանդեր-Յոյլաֆն է: Թէ ինչպէս է ընկել ջուրը, այսօրանը միայն յիշում է, որ իրենց նաւը փոթորկի ժամանակ խորտակւեց, և երբ նաւապետը հրաման արձակեց իջնել մակոյկները՝ սուզող նաւից ազատւելու համար, նա սանդուխքից իջնելիս յետևից հարւած ստացաւ. թէ ով էր խփողը՝ նա չըզիտէր, միայն յիշում էր այն, որ նրա յետևից գնալիս է եղել իր հաւատարիմ ընկերը: Այնու-

հետև թէ Ինչ է կատարուել—նա այլևս չէր յիշում:

Այդ արկածը պատմելիս Վիլլեմը ձեռքը տարաւ դէպի կուրծքը, ապա թևերի տակ և այնտեղ ոչինչ չըզտնելով՝ լալահառաչ բացականչեց.— «վերցրել են իմ պայուսակը. նա չէր կարող վայր ընկնել, որովհետև ամուր կարւած էր բաճկոնակիս: Կորաւ իմ թղթերը... Կորաւ գանձը...» այս ասելով նա ուշազնաց եղաւ:

Նորից նրան ուշքի բերին: Ծտիւրմերը յուսադրեց և խոստացաւ ամեն կերպ օգնել նրան, միայն թէ նա պէտք է հանգիստ լինի և առայժմ մտածէ միայն իր առողջութեան մասին: Նա պատմեց, թէ ճանաչում է նրա պապին, Փրից-Վան-դեր-Յոյլպին, որին նոյնպէս ազատել է ջրից և ամենամօտ բարեկամն է եղել:

Ծտիւրմերի կարգադրութեամբ Վիլլեմին փոխադրեցին նաւասենեակը և առանձին տեղ յատկացրին նրան, ուր ամեն տեսակ խնամք էր տարւում նրան:

Վիլլեմը յանձին Ծտիւրմերի գտաւ իր ամենալաւ բարեկամին և մանրամասնօրէն պատմեց նրան իր ճանապարհորդութեան նպատակի մասին և տւեց նաւի խորտակման մանրամասնութիւնները:

Ծտիւրմերը Վիլլեմի պատմութիւնից եզրակացրեց, որ նրան խփողը եղել է նրա հաւատարիմ ընկերը, Եան Բլոկհուլիզը, որին Վիլլեմը ի գուր հաւատ է ընծայել, որպէսզի կարողանայ

մենակ տիրանալ ամբողջ գանձին. սուրիշ ոչ ոք չէր կարող այդ անել, քանի որ ոչ ոք չըզիտէր այն թղթերի նշանակութիւնը: Նա պատմեց, որ ինքը լաւ ճանաչելիս է եղել Եան Բլոկհուլիզի հօրը, որը յայտնի թուղթ խաղացող է եղել, ամբողջ կարողութիւնը վատնել է թղթախաղի մէջ. լինելով «Հարաւային Զելանդիա» ապահովագրական ընկերութեան գործակալը՝ մեծ գումարներ է իւրացրել ընկերութիւնից և վերջը ինքնասպանութիւն գործել:

— Այդպիսի հօրից դժւար թէ լաւ որդի ծնւէր,— աւելացրեց Ծտիւրմերը: Յայտնեց նաև, թէ Եան Բլոկհուլիզը այժմ կըլինի Եաւա կղզում, կամ նրա շրջակայքում. թէ նրան այնքան շուտ չի յաջողւի այն երեսուն հազար ըուբլով, որ տարել է պայուսակի հետ միասին, մի նոր նաւ վերցնել և խումբ կազմակերպել ու գնալ գանձի յետեից, քանի որ այդ մի այնպիսի ձեռնարկութիւն է, որ կրկնակի և եռակի գումար է պահանջում: Այնպէս որ մեծ յոյս կայ չարիքի առաջն առնել:

Խորհուրդ տւեց Վիլլեմին առայժմ չմտածել իր ձեռնարկութեան մասին, այլ հոգալ շուտ առողջանալու համար: Երբ կըհասնեն Բոմբէյ, այնտեղ նաւի բեռը կըդատարկեն, ապա կընւիւրեն միայն այդ գործին:

Մի քանի օրից յետոյ Ալբատրոս նաւը մըտաւ Բոմբէյի նաւահանգիստը: Ծտիւրմերի առաջին գործն եղաւ հեռագիր ուղարկել Ամստեր-

դամ՝ նոտար Ռիւզերցօօմին, որին անձամբ ճանաչում էր և որին Վիլլեմը յանձնել էր իր ամբողջ գոյքի կառավարութիւնը: Հեռագրով Շտիւրմերը յայտնում էր նոտարին, թէ Վիլլեմն ազատւած է, և զգուշացնում էր, — որ նա զգաստ լինի այն բոլոր փորձերի դէմ, որ կարող են կատարել զանազան մարդկանց կողմից Վիլլեմի կարողութեանը տիրանալու համար:

Երրորդ օրն առաւօտեան ստացւեց այդ հեռագրի պատասխանը:

«Դուք սրիկայ և խաբեբայ մարդու էք պատահել, ասում էր հեռագրի մէջ, որը իրեն Վիլլեմ Վան-դեր-Յոյլպ է անւանում: Իսկական Վիլլեմ Վան-դեր-Յոյլպը Բատաւիայումն է գրտնւում. նա նահանգապետի դիւանի միջոցով խընդրել էր իր բոլոր կանխիկ փողերը — հարիւր հազար ուրբի — փոխադրել իրան, որ և հեռագրով փոխադրւեց: Խորհուրդ եմ տալիս այդ խաբեբային անմիջապէս յանձնել ոստիկանութեանը: Արդէն յայտնել եմ իրեն՝ Վիլլեմին, թէ նրա անունը շահագործող է լոյս ընկել: Յարգանքներով Ամստերդամ քաղաքի նոտար Տիմոթէոս Ռիւզերցօօմ»:

IV

ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆԸ

Վիլլեմը կարծում էր, թէ այդ հեռագիրը կրտսիպէր Շտիւրմերին փոխել կարծիքը իր մա-

սին. բայց հակառակը դուրս եկաւ: Շտիւրմերը կատաղեց, որ իրեն տգէտի տեղ են դնում և խորհուրդներ տալիս:

— Միթէ ես չեմ ճանաչում Յոյլպի ընտանիքը, դիմեց նա ցասկոտ ձայնով Վիլլեմին. ձեր պապը կարծես կհնդանի աչքիս առաջն է, դուք շատ ու շատ նման էք նրան, և վերջապէս իմ գիտակցութիւնն այնքան պարզ է, որ նրա՝ ինչպէս հայելու մէջ, անդրադառնում են իրենց ամբողջ պատկերով, սե ու սպիտակ գոյնով, մեղաւորն ու անմեղը. ես խաբւել չեմ կարող: Բայց այդ դեռ բաւական չէ, ես ուրիշների առաջ էլ կրհաստատեմ և կրվկայեմ, որ դուք էք իսկական Վիլլեմ Վան-դեր Յոյլպը:

Այդ ասելով Շտիւրմերը, ինչպէս յատուկ է ամեն մի գործնական և կտրուկ մարդու՝ հեռեւեալ հեռագիրն ուղարկեց Ամստերդամ.

«Իսկական Վիլլեմ Յոյլպը, իմ բարեկամ հանգուցեալ Փրիցի թոռը, շիկահեր, կապտաչեայ մի պատանի, գտնւում է իմ Ալբատրոս նաւում, իմ հովանաւորութեան տակ: Նրա անձնաւորութեան իսկական լինելը վկայում եմ ես, «Ալբատրոս» նաւի տէր ու տնօրէն Փրէդ Շտիւրմերս: Իրեն Վիլլեմ Յոյլպ անւանող թխահեր և սևաչեայ սրիկայ Եան Բլոկհուիզը գտնւում է Բատաւիայում, քանի դեռ կախաղան չի բարձրացել իր ճարպիկ արարքների համար: Զեզ, որպէս նոտարի վրայ եմ ձգում ամբողջ պատասխանատուութիւնը, եթէ այսուհետև այն խաբե-

բայ սրիկային նորից գումարներ կը փոխադրէք օրինաւոր և իսկական Յոյլպի գումարներից: Յրէդ Շտիւրմեր»:

Հետևեալ օրը լուսաբացին Ալբատրոս նաւը ազատելով իր բեռից, ուղևորւեց դէպի Նաւա կղզին, Բատաւիա քաղաքը:

Բատաւիայում Շտիւրմերը ու Վիլլեմը ուղղակի դիմեցին նահանգապետի կամ փոխարքայի ապարանքը՝ նրան ներկայանալու համար: Հոլլանդացիք մայր երկրում թէև գեմոկրատիկ կարգերի պաշտպան են և այնտեղ ամեն ինչ այդ ոգով է տարւում, բայց գաղութներում դրա հակառակ կարգեր են տիրում. այստեղ ամեն մի պաշտօնեայ իրենից մի անառիկ բերդ է ներկայացնում, որին մօտենալ այնքան էլ հեշտ չէ, իսկ փոխարքան հօ մի անմատչելի կիսաստուած է համարւում: Նրան ներկայանալու համար որոշ ձևականութիւններ պէտք է կատարել. նախ պէտք է դիւանապետին գրաւոր խնդիր տալ և սպասել մինչև որ տեղեկութիւններ կը հաւաքեն: Յետոյ միայն ընդունելութեան որոշ ժամ կը նշանակւի:

Երբ Շտիւրմերը լսեց այս կարգերի մասին, չըկարողացաւ զսպել իր զայրոյթը. նա ուղահայեաց դիրք տալով իր հսկայ հասակին և բռնունցքը բարձրացնելով յարձակւեց դիւանի ծառայողների վրայ. նա գոռում ու սպառնում էր նրանց. «Ի՞նչ, Ալբատրոսի ղեկավարին, Յրէդ Շտիւրմերին, որ միշտ ազատ ելք ու մուտք

ունի իրա թագաւորի ապարանքը, ստիպում էք անարդ ծառաներ, որ սպասեմ սրահնձմ: Այո, ես...

Նրա աղմուկի և գորգոռոցի վրայ հաւաքւեցին դիւանի բոլոր ծառայողները և վերջապէս ձայնը հասաւ փոխարքայի անձնական քարտուղարին, որը դուրս գալով խնդրեց Շտիւրմերին հանգիստ լինել և յայտնել թէ ի՞նչ է նրա պահանջը:

— Բանն այն է, շարունակեց նոյն բարձր տոնով Շտիւրմերը, որ հոլլանդական մի հպատակից խլել են 130 հազար ուրբի և պատրաստւում են խլել նրա մի քանի միլիոն կարողութիւնը: Այդ երիտասարդն իմ բարեկամն է, որին պատիւ ունիմ ծանօթացնելու ձեզ հետ. նրա անունն է Վիլլեմ Վան-դեր-Յոյլպ:

Այդ ասելով նա ամաչկոտ երիտասարդին առաջ մղեց:

Փոխարքայի անձնական քարտուղարը լսելով այդ անունը զարմանքով բացականչեց.

— Ներեցէք, պարոն, ես անձամբ ճանաչում եմ պարոն Յոյլպին: Այդ...

— Դուք ճանաչում էք ոչ թէ պարոն Յոյլպին, այլ լիբբ, շառլատանին, գողին, խաբերային, սրիկային, մարդասպանին,— բորբոքւեց նաւաստին:— Իսկական Վան-դեր-Յոյլպը ահա սա է. միակը:

— Լսեցէք, յարգելի պարոն,— ուզեց ընդմիջել քարտուղարը:

— Ո՛չ, ներեցէք. ոչ թէ ես, այլ դուք պէտք

է լսէք ինձ, յարգելի պարոն: Ես ուզում եմ տեսնել նահանգապետին և պահանջել նրանից՝ ձեռք առնել օրինաւոր միջոցներ ձերբակալելու աւագակին և Թալանւածին վերադարձնելու նրա գոյքը:

—Պահանջել,—յօնքերը կիտեց քարտուղարը, որ սովոր չէր նման տոնով խօսքեր լսել:

—Այո, պահանջել, ուժեղ թափով պնդեց Շտիւրմերը:

—Ամենից առաջ, յարգելի պարոն, հարկաւոր է, որ մէկը հաստատէ, թէ ձեզ հետ եկողը իսկական Վիլլեմ Վան-դեր-Տոյլան է: Որովհետև մեզ մօտ, քաղաքումս, բաւական ժամանակ է, որ ապրում է այդ անունը կրող մի անձն, որը ամենալաւ յանձնարարականով եկաւ այստեղ և ընդունւած է մեր հասարակութեան պատուաւոր ընտանիքներում. Իսկ ո՞վ կըհաստատէ այդ մարդու իսկական լինելը:

Այստեղ Շտիւրմերի համբերութիւնը հատաւ և նա գոռաց.

—Ե՛ս եմ վկայում, ես:

—Դ՞հա, զարմացած հարցրեց քարտուղարը. իսկ ո՞վ կը վաւերացնէ ձեր անձնաւորութիւլը:

Պաշտօնեան յաղթանակը տարած համարելով իրան ժպտաց:

—Ահա թէ ինչ. ուրեմն ձեզ հարկաւոր է, որ ստուգւի, թէ ո՞վ եմ ես, գոռաց Շտիւրմերը: Շատ լաւ: Մենք կըգտնենք մէկին, որ չարչինե-

րի այս զգւելի որջում ճանաչելիս կը լինի «Աւրատրոսի» նաւապետին, Ֆրէդ Շտիւրմերին: Կըգտնենք մէկին, որ կը յիշի, թէ ինչպէս Ֆրէդ Շտիւրմերը ձեր թագաւորի սուզող նաւակը ազատեց փորձանքից, փրկեց նրան, ճաշեց թագաւորի հետ և նրանից հրաւէր ստացաւ այցելել նրա ամրոցը առանց որևէ ձևականութեան:

Այդ խօսքերի վրայ քարտուղարի աչքերը լայն բացւեցին. այդ անսպասելի էր նրա համար:

—Այժմ Բատաւիայի նաւահանգստում որ ականանաւն է հերթապահութեան կանգնած. ո՞վ է նրա հրամանատարը, հարցրեց Շտիւրմերը:

—«Էզգոնդը», Կրիւտերի հրամանատարութեամբ:

—Շատ լաւ. քառորդ ժամից յետոյ Վիլլի Կրիւտերին այստեղ քաշ կըտամ. կարծեմ նրա վկայութիւնը իմ անձնաւորութեան մասին բաւական երաշխիք կըլինի ձեզ համար, պարոն քարտուղար:

—Դ՞հա, քաշ կտաք ծովապետին:

—Ոչ օձիքից, ի հարկէ, ծիծաղեց նաւաստին, այլ նրա նաւը իմ նաւից կապելով, ինչպէս մի անգամ քաշ տւի նրա ականանաւը, որ կառչել էր ծանծաղուտին:

—Սպասեցէք, սպասեցէք, ես հաւատում եմ ձեզ, հարկաւոր չէ ծովապետին այստեղ հրաւիրել:

—Այդ էլ լաւ է, որ մի ժամ վիճելուց յետոյ, վերջապէս հաւատացիք ազնիւ մարդուն. իսկ մի սրիկայի հաւատացել էք առանց վէճի:

—Սպասեցէք, պարոն Շտիւրմեր. դուք ծանրը դատավճիռ էք կարդում մեր գլխին. մենք սովոր չենք այդպէս արագ վճիռներ արձակել:

—Շատ ցաւում եմ, որ սովոր չէք. ուրեմն թոյլ կտամք ներկայանալու նահանգապետին:

—Իժարդարար նահանգապետն այստեղ չէ, նա գնացել է մօտակայ քաղաքը. սպասեցէք երկու-երեք օր:

—Ի՛նչ, սպասել երկու-երեք օր. չէ՞ որ սրիկայ Եան Բլոկհուրդը մեր հոտը կառնի և փախուստ կըտայ:

—Բայց իմացէք, պարոն Շտիւրմեր, որ առանց նահանգապետի յամենայն դէպս այդ գործը անհնարին է վճռել:

—Առանց նահանգապետի գիտութեան չի կարելի գրպանահատին կալանաւորել:

—Ի՞նչ հարցը ուղիղ չէք դնում, պարոն նաւապետ, ասաց պաշտօնեան կարմրելով, —գողին, ապացուցւած գողին իրաւունք ունի բռնելու ամեն մի ոստիկան: Բայց դուք մի նեղանաք ինձնից... ես անձնապէս կարող եմ հաւատալ Ձեզ...

—Փնօք Աստուծոյ:

—Բայց օրէնքով որոշ միջոցներ ձեռք առնելու համար այնուամենայնիւ հարկաւոր է քննութիւն կատարել, որոշ տեղեկութիւններ հա-

ւաքել: Որին դուք մեղադրում էք, ունի փաստաթղթեր...

—Գողացած:

—Այդ էլ պէտք է ապացուցել, պարոն Շտիւրմեր:

—Ապացուցել. շատ լաւ: Ես կապացուցեմ: Միայն դուք մի խանգարէք ինձ գործել այնպէս, ինչպէս ես կը կամենամ:

—Ոչ միայն չեմ խանգարի, — ժպտաց քարտուղարը, ընկճւած նաւաստիի կորովից, այլ և սիրով կօգնեմ որքան կարող եմ: Բայց եթէ լսէիք իմ բարեկամական խորհուրդը, կըսպասէիք մինչև նահանգապետը վերադառնար: Նա կանէ այն, ինչ ես չեմ համարձակւի անձամբ անել. վախենում եմ իմ իրաւասութեան սահմանից դուրս եկած լինեմ:

—Սպասել. հը՛մ, — տատանւեց Շտիւրմերը:

Նրա գլխում մի նոր միտք յղացաւ:

—Շատ լաւ, ասաց նա քիչ մտածելուց յետոյ: Հիմա ես կերթամ ծով և կը վերադառնամ մի քանի օրից յետոյ, այն ժամանակ մենք, պարոն քարտուղար, աւելի շուտ կարող կ'լինինք համաձայնութեան գալ: Յտեսութիւն. գնանք, Վիլլեմ:

Երբ նրանք հեռացան, նահանգապետի անձնական քարտուղարը, որ նրա բացակայութեան ժամանակ փոխարինում էր նրան, ազատ շունչ քաշեց և որոշեց չըխառնել այդ գործին մինչև նահանգապետի վերադարձը. մանաւանդ որ նա-

հանգստեանը բաւական մտերմացել էր Եան Բլակուեի հետ, նրան պատուաւոր հասարակութեան մէջ մտցրել:

Իսկ Շտիւրմերն ու Վիլլեմը, հասնելով ծովափ, նստան «Ալբատրոս» նաւը և ուղևորեցին Կրակադուա:

V

«ՈՍԿԷ ՆԱԻԻ» ԳԵՐԵԶՄԱՆԸ

—Ո՞ւր ենք գնում, նաւապետ,—հարցրեց Վիլլեմը Շտիւրմերին:

—Ուր որ պէտք է,—փնթփնթաց նա, որ վատ տրամադրութեան մէջ էր նահանգապետի քարտուղարի հետ ընդհարելուց յետոյ: Բայց երբ տեսաւ, որ Վիլլեմը այդ բանից այլայլեց, մեղմացաւ:

—Ուշք մի դարձրու իմ փնթփնթոցին, պատանի, ասաց նա երիտասարդ հոլլանդացուն, ձեռքը բարեկամաբար դնելով նրա ուսին:—Ես չարանում եմ այդ ցամաքային մկների վրայ, որոնց հետ այդքան դժւար է գործ ունենալ. մի ուղմբով պէտք է նրանց վերջ տալ: Նրանք սովոր են միշտ գործ ունենալ ոչ թէ ազնիւ մարդկանց, այլ սրիկաների հետ: Սրիկաները միշտ էլ հարկաւոր փաստաթղթերն ունեն: Իսկ ազնիւ մարդիկ, որ գրաւոր ձևականութեան մասին չեն հոգում, մտածում են միայն մաքուր խղճի

մասին, սովորաբար փաստաթղթեր չեն ունենում, որովհետև յոյսերը աւելի դնում են իրենց գործի ճշմարտութեան վրայ, քան մի կտոր թղթի, որ ամեն մի գրագիր կարող է կեղծիքով հնարել: Ես երբէք չեմ կարողանում տանել ցամաքային այդ իշխանաւորներին. ով նրանց հետ խաղում է, միշտ էլ կը տարւի:

—Բայց դուք կատարեալ լաղթութիւն տարաք քարտուղարի դէմ, նաւապետ, ասաց Վիլլեմը. նա, կարծես, ձեզանից վախենում էր:

—Իրան, ասաց ժպտալով Շտիւրմերը, յիշելով իր տաք բացատրութիւնները քարտուղարի հետ: Բայց թողնեք մկներին իրենց բնում, ինչ ուզում են թող անեն, քանի մենք այնտեղ չենք: Գիտես, սիրելիս, ես ուզում եմ դիտել այն տեղը, ուր թաղած է շունը...

—Շունը, ի՞նչ շուն,—զարմացաւ հոլլանդացին, չըհասկանալով նաւապետի պատկերաւոր արտայայտութիւնը:

—Է՛հ, դու էլ բթացար. ամեն մի խօսք պէտք է ծամել, դնել բերանդ, որ կուլ տաս. խօսքս «Ալկիմահարի» մասին է: Ես եղել եմ Կրակադուա կղզիներում. քո պատմածներից ես ենթադրում եմ, թէ որտեղ կարող է թաղած լինել Ալկիմահարը:

—Եւ դուք ուզում էք այժմ այնտեղ գնալ:

—Այո, պէտք է նայել տեղը, դիւրբ:

—Իսկ եթէ...

—Եթէ ի՞նչ:

— Եթէ այնտեղ հանդիպենք նրանց...

— Քո կեղծ բարեկամին:

— Այո:

— Շատ պարզ է. եթէ նրանք արդէն սկսել են Ալկմահարը դուրս քաշել ջրի տակից, առանց այլևայլութեան գնդակների տարափ կը թափեն նրանց գլխին և դուրս կը քշեմ այնտեղից:

— Իսկ պատասխանատուութիւնը:

— Օհօ. պատասխանատուութիւնից երբէք չեմ խուսափի. ես էլ հօ նահանգապետի քարտուղարը չեմ,— ծիծաղեց նաւապետը: Պէտք է խոստովանել, որ ես չեմ կարծում, թէ այդ անախտան Եան Բլոկհոլդը, որ իր հօր արժանաւոր գաւազն է, այդքան կարճ ժամանակում կարողացած լինի այդ գործն սկսել: Եւ գիտե՞ս ինչը կարող է արգելել նրան. քո փողերը: Նա իր կեանքում այդքան փող տեսած չի լինի: Եւ որովհետեւ նա ժառանգական խաղամու է, և չի կարող այդպէս չլինել, քանի որ նայրն էլ այդպէս էր, ուստի նա այժմ տարւած է այդ կրքով:

— Գիտե՞ս ինչ է անում նա հիմա, սիրելիս, շարունակեց նաւապետը: Որպէսզի կասկածելի չը դառնայ և կարողանայ այդ ձեռնարկութիւնը գլուխ բերել, այսինքն՝ «Ոսկէ նաւը» ջրի տակից դուրս հանել՝ նա ծանօթութիւններ կլինի սկսած ամենայայտնի ընտանիքների հետ: Երևի իջել է առաջնակարգ հիւրանոցներից մէկում, ապրում արքայավայել պարագաներում, մեծանուն ընտանիքների կանանց և օրիորդների գլուխներն է

չցնում իր պատմութիւնները առասպելական կալուածների, հարստութեան և նշանաւոր ազգականների մասին և այլն: Միւս կողմից գիշերները, օգտուելով յարմար վայրկեաններից և թուղթ խաղալու տենչից, իջնում է մութ անկիւնները, թղթախաղի բները, որ Բատաւիայում անպայման շատ կան, և այնտեղ անվերջ տարւում ու աւելի զարգացնում այդ կիրքը իր մէջ: Ահա թէ նա ինչով կը լինի զբաղւած այժմ:

— Բայց դու ի՞նչպէս վստահացար այդ մարդուն, մի՞թէ դու աչքեր չունէիր, դիմեց նա հոլլանդացուն: Հաւատացնում եմ քեզ, Վիլլեմ, որ նա Ամստերդամում ունի իր խումբը, ուր թղթախաղում տարել ու տարւել է անվերջ: Ճշմարիտն ասան, նա քեզ ոչ մի անգամ չի հրաւիրել իրենց որջը, հարցրեց Շտիւրմերը Վիլլեմին: Վիլլեմը տատանւեց:

— Այո, մի անգամ նա հրաւիրում էր ինձ մի տեղ...

— Դէհ, տեսնում ես:

— Բայց նա չէր պնդում, նաւապետ. այնպէս...

— Լաւ, դու իմ կարծիքը այդ սրիկայի մասին չես կարող փոխել, Վիլլեմ. քո սիրտը շատ բարի է. դու նրան դեռ սրիկայ չես համարում քո մտքում: Ես այդ տեսնում եմ:

Վիլլեմը գլուխը քաշ քցեց:

Յիրաւի, Վիլլեմը դժւարանում էր համաձայնել նաւապետի խիստ վճռի հետ:

Ճիշտ է, շատ բանով հաստատուում էր նաւապետի ասածը ի վնաս Եանի, բայց փողի պայտւատէր պատահաբար կարող էր Եանի ձեռքն ընկնել: Կարող էր այնպէս պատահած լինել, որ Եանը տեսնելով է որ Վիլլեմը խեղդւել է և ինքը մի կերպ ազատուել, պոկած լինի քսակը: Որ նա Վիլլեմի անունը շահագործում է, ի հարկէ, ազնիւ բան չէ, բայց որոշ չափով ներելի է այն բարդ պայմանների համար, որ ծովապետն ի նկատի չի առնում:

Յետոյ՝ եթէ Եանը չըզիտէ Վիլլեմի ազատւելու մասին և նրա անունով սկսում է Ալկմահարը ջրից դուրս հանելու մասին մտածել, միթէ դա յանցանք է: Բոլորովին ոչ:

Չէ որ Եանը երդւել էր օգնել Վիլլեմին կատարելու նրա պապի կտակը. թէև Եանը այնքան էլ սրտանց չէր ուզում օգնած լինել նաւաստիների ընտանիքներին և առհասարակ յայն հասարակական օգտաշահ գործունէութեան նւիրել Ալկմահարի ոսկիները:

Ինչո՞ւ չենթադրել, թէ այժմ էլ Եանը աշխատում է նոյն ուղղութեամբ, և ոչ սեփական շահերի համար:

Ոչ, Շտիւրմերը հազիւ թէ ճշմարիտ լինի. նա շատ խիստ է:

Սյդպէս էր մտածում Վիլլեմ Վան-դեր-Յոյպը: Մինչ այդ «Ալքատրոսը» ալօսելով ծովի երեսը սլանում էր դէպի Կրակադուա կղզին:

\* \*

Առաւօտեան վաղ, երբ Ալքատրոսը հասաւ Կրակադուա կղզիները, Շտիւրմերը նաւի դեկավարութիւնը յանձնեց իր օգնականին, ինքը Վիլլեմի հետ միասին նստեց սրածայր և սրնթաց մակոյկն ու դիմեց դէպի անմարդաբնակ կղզիները:

Մովը հանդարտ էր, երկինքը պարզ. օդաչափը բարձրանում էր: Ամեն-ինչ լաւ եղանակ էր գուշակում:

Իսկ մակոյկը նետի արագութեամբ առաջ էր գնում. Շտիւրմերը մակոյկի յետևում դեկն էր պահում իր ձեռքում, իսկ ուժեղ և տոկուն հողանդացին ուժգին թափով թիավարում էր:

Մակոյկն անցնում էր ջրի վրայի ժայռերի տակով, ստորջրեայ քարքարուտների միջով:

— Իմանդա՞ղ, — ասաց նաւապետը, և ուշի ուշով նայեց չորս կողմը: Մօտենանք այն ժայռին, այդպէս. բիչ էլ. դէհ, կանգնիր. դձուրս հանիր թիակները: Եթէ քո պապի պատմածները առասպել չեն, — մրմնջաց Շտիւրմերը, Ալկմահարը այստեղ պէտք է խորտակւած լինի:

— Ի ուր կարծում էք, — յուզւած ասաց Վիլլեմը շուրջը նայելով:

— Համոզւած եմ: Ահա այն ժայռը, որ դուրս է ցցւած ջրի միջից և որի գագաթը կարծես կացնի բերան լինի. չենց այդ ժայռին պէտք է դիպած լինի «Ոսկէ նաւը»: Տեսնում ես, այն ժայռի երեսը ծածկւած է մրով. ազատւածները, նրանց մէջ և քո պապը, դուրս են եկել ափ և

կրակ վառել: Ճիշտ է, այն օրից անցել է մի դար, բայց քարի մրոտ խանձաժքը կարող է մնացած լինել, որովհետև այստեղ անձրևներ քիչ են գալիս:

Եւ վերջապէս անա այն ժայռը, որ ուղտի նման կախւած է ջրի վրայ և կարծես ջուր է խմում:

Այն, Արկմահարը կամ այստեղ է և կամ ոչ մի տեղ:

— Դուք հանձնում էք ձեր շորերը, նաւապետ, զարմանքով հարցրեց Վիլլեմը, երբ տեսաւ, որ նա իրօք հանում է շորերը, և ուզում էք ջուրը մտնել:

— Այն, բայց երկար մի խօսիր: Կսիր ինչ եմ ասում. ես ուզում եմ իմանալ, թէ ի՞նչ կայ ջրի տակը այդ քարերի շրջանում: Դու հանգիստ նստիր մակոյկի մէջ և սպասիր ինձ: Ոչ մի դէպքում ջուրը չըմտնես, հասկանում ես:

— Կաւ, նաւապետ:

Չտիւրմերը մի ճարպիկ շարժումով ընկաւ ջուրը և սուզուեց ներքև: Անցաւ մի բոպէ, բայց նա դեռ դուրս չէր եկել. այդ բանը յուզեց Վիլլեմին. սա կարծեց, թէ նա խեղդուեց և մտածելով, թէ կարող է նրան օգնել, մի ակնթարթում շորերը հանեց ու ընկաւ ջուրը:

Բայց հենց այդտեղ էլ նրա գլուխը հանդիպեց ջրի մէջ լողացող մի բանի և նրան դուրս մղեց դէպի վեր:

Դա Շտիւրմերն էր, որ դուրս էր գալիս ջրից:

— Ո՛ր սատանան դրդեց քեզ ջուրը մտնել, — լաւեց Շտիւրմերի բարկացկաւ ձայնը:

— Ես... ես կարծում էի... ես վախում էի... թոթովեց ամաչկոտ հոլլանդացին:

— Դու կարծում էիր, որ ինձ սատանաները բռնել են, հա՛. և դու եկար ինձ օգնելու: Մեծահոգութիւն: Ես անում, բայց շատ անմիտ բան է: Շատ խնդրում եմ, միւս անգամ այդպէս փորձեր չանես: Իմացիր, և մի անգամ ընդմիջո՞ւ միտորդ պահիր, որ ես փորձաւոր լողորդ եմ, յամենայն դէպս քեզանից աւելի լաւ եմ ջրի մէջ ինձ դեկավարում:

Քիչ հանգիստ առնելուց յետոյ Շտիւրմերը բարեկամաբար խփեց նրա ուսին ասելով. — քո պապը, սիրելիս, առասպել չի հնարել:

— Դուք... դուք գտնա՞ք «Ոսկէ նաւը», տեղից վեր թռչելով ասաց Վիլլեմը:

— Այն, այն. բայց ինչո՞ւ ես բորբոքում, հանգստացրեց նրան նաւաստին:

— Բայց, նաւապետ, ես այրւում եմ անհամբերութիւնից:

— Եւ դրա համար էլ ջուրն ընկար, հրեռաց Շտիւրմերը:

— Դուք տեսա՞ք Արկմահարը:

— Այո, դժբախտաբար ես յատակ իջայ նաւից բաւական հեռու և չկարողացայ դիտել ինչպէս հարկաւոր է, որովհետև շունչս կտրւում

էր: Թիավարիւր քիչ առաջ, մինչև այն քարը. բաւական է. դադարիր: Ես կրկին ջրի տակն եմ գնում. բայց տես, ոչ մի դէպքում, որքան էլ ուշանամ, դու ջուրը չըմտնես: Այդ ասելով նա կրկին իրեն ձգեց ջուրը և անյայտացաւ հողանդացու աչքից:

Որպէսզի ժամանակը մեռցնէ և միևնոյն ժամանակ իմանայ, թէ Շտիւրմերը որքան ժամանակ կարող է ջրի մէջ մնալ՝ Վիլլեմն սկսեց վայրկեանները համարել: Անցաւ եօթանասուն, ութսուն... իննսուն վայրկեան. Վիլլեմն չըկարողացաւ համբերել. միթէ մարդը կարող է երկու ըոպէի չափ ջրի տակ մնալ առանց շունչ քաշելու, մտածում էր նա. Շտիւրմերն անպայման խեղդուեց. հաւանօրէն նա խճճուեց խոտերի մէջ և չի կարողանում դուրս գալ:

Ամենալաւ մարդն աշխարհումս, որին ես սիրեցի, ինչպէս կարող էի սիրել հարազատ ծնողիս, գուցէ այստեղ մի քանի քայլ ինձանից հեռու կուռնէ մահուան դէմ, իսկ ես ձեռքերս ծալած նստել եմ մակոյկում: Ծիշտ է, նա արգելեց ինձ ջուրը մտնել. բայց... բայց միթէ ես պէտք է նրան կուրօրէն հնազանդեմ: Գուցէ նրա փրկութիւնը ինձանից է կախուած, իսկ ես սպասում եմ...

Հարիւր... հարիւր հինգ... հարիւր տասը վայրկեան...

Նա այլևս չկարողացաւ դիմադրել իր զգացմունքի բուռն մղումին և մեծ թափով նետուեց

ջուրը, այնպէս որ շուտով հասաւ յատակին և սկսեց չորս կողմը նայել, Շտիւրմերին փնտրել:

Նա մեծ զարմանքով յատակի վրայ տեսաւ «Ալիմահար» նաւը, որին այնքան փափագով նա փնտրում էր:

Սակայն չկար Շտիւրմերը: Մինչ այդ նա զգաց մի առարկայի սոււեր և երբ յետ նայեց, տեսաւ «Ակուլա» ձկան: Սարսափով բռնուած՝ նա բնազդաբար ձեռքերը ուժգին թափով շարժեց և վեր բարձրացաւ:

Ձուկն սկսեց հալածել նրան. այդ ծովային վագրը, կարծես, հասկանալով, որ Վիլլեմն ուզում է մակոյկին հասնել, աշխատում էր նրա առաջը կտրել:

Այն պահին, երբ ձուկն իր յոգնած ու անձար որսին պատրաստ էր կլանել, մի ոյժ բաժանեց այդ երկուսին. Վիլլեմը դուրս նետուեց, իսկ ձուկը գալարումներով ցած իջաւ:

Իսկ Շտիւրմերն էր, որ դանակի մի հարևածով ձկան փորն էր թափել, իսկ միւս ձեռքով Վիլլեմին դէպի մակոյկն էր տանում՝ բռնած նրա ուսից:

Շտիւրմերն այլևս չըյանդիմանեց պատանուն, որ ամօթից և վախից կարմրել, կրակ էր կտրել:

Նա պատմեց, որ տեսել է Վիլլեմին ծովի յատակում հենց այն վայրկեանին, երբ ձուկը յարձակւել է նրա վրայ. եղել է Ալիմահարի մէջ և այնտեղից բերել է մի բուռն ոսկի, որը ցոյց տուեց Վիլլեմին:

Աւելորդ է պատմել, թէ որքան ուրախացան այդ երկու բարեկամները, և արագօրէն նաւակը թիւալարելով դիմեցին դէպի իրենց նաւը, դէպի «Ալբատրոսը»:

VI

ԵՐԵՍ ԱՌ ԵՐԵՍ

Շտիւրմերը վերադարձաւ Բատաւիա և մըտաւ նահանգապետի դիւանատունը: Այս անգամ ամենայն հեշտութեամբ նա ընդունելութիւն գրտաւ: Նահանգապետը դեռ չէր վերադարձել. նրան ընդունեց քարտուղարը, որ և դիմեց նրան սիրալիբ հարցով.

— Գալուստներդ բարի, նաւապետ. ինչպէս են ձեր գործերը: Ո՞ւր գնացիր:

— Գտայ այն տեղը, ուր խորտակել է «Ալկմահարը»:

— Եւ ի՞նչ:

Նաւապետը պատասխանի փոխարէն գրպանից հանեց մի բուռն ոսկի և թափեց սեղանի վրայ:

— Այդ ի՞նչ է, հարցրեց զարմացած պաշտօնեան, տեսնելով հին դրամներ:

— Ոսկի է, — կարճ պատասխանեց նաւաստին:

— Ո՞րտեղից:

— Ալկմահարի միջից:

— Դուք... դուք գտե՞լ էք «Ոսկէ նաւը»:

— Ինչպէս տեսնում էք, — ծիծաղեց նաւապետը և փողը հաւաքեց ու գրպանը լցրեց:

— Այդ անհնարին, այդ չլսած բան է:

— Ի՞նչ պատճառով:

— Բոլորը կասկածում են այդ գանձի գոյութեան մասին:

— Մարդիկ շատ բանի համար են կասկած յայտնում, չկամենալով մի քիչ մտածել. նշանակութիւն չունի այդ:

— Եւ դուք... դուք իջա՞ք այնտեղ:

— Ոչ միայն իջայ, այլ և, ինչպէս տեսնում էք, այդ բանի համար ապացոյց էլ բերի:

— Կեցցէք. ի՞նչ զրութեան մէջ է Ձեր միւս գործը:

— Այսինքն:

— Կարո՞ղ էք ապացուցել, թէ այն պատանին, որին դուք հովանաւորում էք, իսկական Վիլլեմ Վան-դեր-Տոյլպն է: Մի նեղանաք, նաւապետ, գործը բարդանում է: Բանը նրանումն է, որ ձեր հակառակորդն էլ իր իրաւունքներն է առաջադրում. նա պահանջում է, որ թէ ձեզ և թէ ձեր պատանուն՝ որպէս կեղծարարների բանտ տանենք, դատի ենթարկենք:

Շտիւրմերը բարկութիւնից հայեոյանքի տարափ թափեց պաշտօնեայի գլխին, որ չի կարողանում իսկականը կեղծից գանազանել:

Վերջապէս քարտուղարը յանձն առաւ երկուսին էլ՝ թէ իսկական և թէ կեղծ Տոյլպին, նահանգապետի դիւանում իրար ներկայացնել:

ոչ պաշտօնական ձևով, որ երես առ երես խօսեն, գոցցէ հնար լինի իսկականը որոշել:

Երկու կողմից համաձայնութեան եկան և այդ տեսակցութիւնը նշանակեցին միւս օրը:

Պատասխանելով քարտուղարի մի շարք հարցերին, Շտիւրմերը ի միջի այլոց ասաց, թէ պատանի Յոյլպը ինչ նպատակի է գործադրելու այդ գանձը, եթէ նրան յաջողի ջրից հանել այն. նրա միակ նպատակն է հասարակական բարիքների նւիրաբերել ամբողջը:

Քարտուղարի խօսքերից յայտնի եղաւ, որ կեղծ Յոյլպը, այսինքն Եան Բլոկհուիզը խոստացել է գանձի կէս մասը Հոլլանդական կառավարութեան նւիրել. այդպիսով նա յոյս ունէր կառավարութեան օժանդակութեամբ իր կեղծ դրութիւնը ծածկել և ընկճել հակառակորդին:

Երբ Շտիւրմերը վերադարձաւ իր նաւը, — Վիլլեմին այնտեղ չըգտաւ: Նրան յայտնեցին, թէ Վիլլեմը դուրս եկաւ ծովի ափը մանգալու, այնտեղ պատահեց մի երիտասարդի, որի հետ ուղևորւեց քաղաք:

Քաղաքում Շտիւրմերը հանդիպեց իրենց ենթասպաներից մէկին՝ Շերվուդին, որը յայտնեց, թէ տեսել է Վիլլեմին սևաչեայ և շքեղ հագնւած մի երիտասարդի հետ «Ամերիկական բարը» գնալիս:

Շտիւրմերը վերցնելով Շերվուդին իր հետ դիմեց այդտեղ, սակայն այդ շէնքի դուռը փակ էր:

Պատահմամբ մի չինացի, որին Շտիւրմերը լաւ վարձատրեց, պատմեց, թէ նրանց փնտրած մարդը հարբած դրութեամբ իր ընկերոջ թևին յենւած մտաւ Կան-Սինգի օպիումի ծխարանը:

Չինացու նկարագրութիւնից բաւական պարզւեց, որ Վիլլեմին օպիումի ծխարանը տանողը Եան Բլոկհուիզը կարող էր լինել: Այդ ծխարանը յայտնի էր որպէս սրբկաների և ամեն տեսակ գողերի ու շողակրատների վայր: Այն միտքը, թէ Եան Բլոկհուիզը կարող էր Վիլլեմին խաբէութեամբ տարած լինել՝ նրան կորցնելու նպատակով, աւելի ու աւելի հաստատուեց և Շտիւրմերին ձգեց անհանգիստ դրութեան մէջ:

Նա խոստացաւ չինացուն անատ վարձատրել, եթէ սա հարկ եղած ժամանակ իշխանութեան առաջ վկայէ և ասէ այն ամենը, ինչ տեսել ու լսել է, իսկ ինքը Շերվուդի հետ գնաց ծխարանը:

Ծխարանի տէրը, որ մի խորամանկ ծերունի էր՝ ազգով չինացի, երկար ժամանակ չէր ուզում յայտնել իսկութիւնը: Վերջը սպառնալիքի և առատ վարձատրութեան ազդեցութեան տակ ասաց, թէ, իրաւ, նրա մօտ եղել են երկու երիտասարդ, մէկին ինքը ճանաչում է, որը նրա մշտական այցելուներից է. դա սևաչեայ, թխահեր մի երիտասարդ է. կանչում են նրան Վանդեր-Յոյլպ. միւս ընկերը շէկ և բարձրահասակ մի գեղեցիկ երիտասարդ էր. սա առաջինին կանչում էր Եան:

— Եէկ տղան կարծես հարբած լինէր, շա-

ըրունակեց պատմել ծխարանի տէրը. ընկերոջ ստիպումով երկու անգամ այստեղ ծխեց, բոլորովին գոյնը փոխեց, դեղնեց. ես նոյնիսկ վախեցայ, թէ նա կարող էր այստեղ մեռնել, և այն ժամանակ իմ ծխարանը կըքանդէր ոստիկանութիւնը, ուստի խնդրեցի սև տղային, որ այստեղից շուտ հեռանան: Նրանք կառք նստան և գնացին գետաբերանի նաւահանգիստը:

Շտիւրմերը մի բուռն փող տալով ծխարանի տիրոջը, գնաց գետաբերանը: «Ո՛ր կարող էր տանել այդ սրիկան անմիտ և դիւրահաւատ պատանուն», մտածում էր նա: Բախտի բերմամբ նա այդտեղ հանդիպեց իր ծանօթներէից մէկին, որը պատմեց, թէ տեսել է երկու երիտասարդի, որոնցից մէկը ըստ երևոյթին կամ հիւանդ պէտք է լինէր, կամ հարբած. միւսը զրան դրել է չինական մի նաւակի մէջ և ճանապարհ ձգել. այդ նաւակը շատ կասկածելի էր երևացել նրա աչքին:

— Ուրեմն նրան փախցրել են, — հառաչեց Շտիւրմերը, որի սիրտը լի էր դառն կակիծով:

Որովհետև գիշերը շուտով վըայ էր հասնելու, հեռակարար նրան փնտրելու ամեն մի փորձ անօգուտ պիտի անցնէր, ուստի Շտիւրմերը հաշտեց այն մտքի հետ, թէ Վիլլեմ Վանդեր-Տոյլպը անհետ կորել է:

\* \*

Միւս օրը առաւօտեան Շտիւրմերը մոայլ դէմքով ենթասպայ Շերվուդի և մի քանի մարդ-

կանց ուղեկցութեամբ մտաւ նահանգապետի դիւանատունը:

Քարտուղարը յայտնեց, թէ Վիլլեմ Վանդեր-Տոյլպը վաղուց այդտեղ է և սպասում է նրանց, և պահանջեց որ միւսն էլ ներկայ լինի:

Շտիւրմերն ասաց, թէ իր պաշտպանութեան տակ առած մարդը չկայ:

Եանը այդ լսելով առաջ եկաւ ասելով — ես ձեզ ասում էի, պարոն քարտուղար, թէ խաբերան չի համարձակւի իմ առաջ դուրս գալ, որովհետև ամենքն իսկոյն կըհասկանային նրա կեղծ դրութիւնը:

— Դո՛ւ, խաբերայ, դո՛ւ, մարդասպան, գոռաց Շտիւրմերը: Է՛յ, տղայք, եկէ՛ք այստեղ, կալանաւորեցէ՛ք այդ աւազակին:

— Այդ ի՞նչ իրաւունք է, — որ դուք գործ էք դնում, նաւապետ, զայրացած խօսեց պաշտօնեան:

— Նա թու՛նաւորեց այն պատանուն, — շարունակեց Շտիւրմերը, — և անզգայ դրութեան մէջ չինական աւազակային մի նաւով դէպի ծով ճամբեց: Ահա վկաները, որ ամեն ինչ կըպատմեն ձեզ. և ինչո՞ւ համար են վկաները: Դուք նա յեցէք այս աւազակի դէմքին, և այդ բաւական է որ համոզւիք, թէ նա մարդասպան է:

Քարտուղարն ալկամայ նայեց Եանի դէմքին:

— Պարոն Վանդեր-Տոյլպ, այդ ի՞նչ պատահեց ձեզ, — հարցրեց նա:

— Ի՞նչ... սիրտս խառնուում է... ջուր...  
օ՛ր...

Թուում էր թէ Եանը ուշաթափ է լինում: Բարտուղարը, որ կանգնած էր Եանի մօտ, ուզեց նրան բռնել և պաշտպանել: Եանը օգտուելով ուրիշների շփոթութիւնից, մի հարւած էլ տւեց քարտուղարի ճակատին ու ճարպիկ շարժումով մողեսի նման դռնից դուրս սողաց ու անհետացաւ:

Ծառաները վազեցին յետևից, բայց նա անյայտացաւ: Բատաւիայի ամբողջ օստիկանութիւնը ոտքի ելաւ նրան բռնելու, բայց Եանը չկար: Կարծես գետինը ճեղքւել ու նրան կլանել էր: Այդ բանը շմեցուցիչ տպաւորութիւն թողեց Բատաւիայի ընտիր հասարակութեան վրայ, որ գրկաբաց ընդունել էր Եանին իր մէջ...

Մեծ անհանգստութիւն և հոգս պատճառեց այդ դէպքը նաև քարտուղարին, որը երկար ժամանակ մտածում էր, թէ ինչ պատասխան է տալու նահանգապետին՝ աւագակին ձեռքից բաց թողնելու համար:

VII

ՄԷԿԸ ԳՏՆԻԱԾ Է

Եաւա կղզում, դեռ հոլլանդական տիրապետութիւնից առաջ, բնիկ ժողովուրդը մալայեան

ցեղից պաշտում էր մի կրօն, ըստ որի իրենց աստծուն զոհ էին բերում մարդկանց: Հոլլանդական կառավարութիւնը՝ տիրելով կղզուն՝ վերջ տւեց մարդկային զոհաբերութիւնն ընդունող այդ կրօնին: Եւ այդ օրից շատ ու շատ ժամանակ էր անցել:

Ճշմարիտ է, երբեմն-երբեմն լսուում էին, թէ կղզու խուլ անկիւններում, որ դեռ անմատչելի էին եւրոպացիներին, կառարում էին նման ծէսեր ու սովորութիւններ, թէ բնիկ ժողովրդի մէջ դեռ կան «ուշա» կոչւած կրօնաւոր իշխանները կամ կրօնապետները, որ իշխում են տգէտ ու մոլեռանդ ամբոխի վրայ և վառ պահում նրանց մէջ այդ մարդակեր սովորութիւնը, բայց ոչ ոք չէր հաւատում այդ լուրերին:

Պաշտօնապէս յայտարարւած էր, թէ այդ պաշտամունքը ոչնչացած է:

Ահա մի խումբ մարդիկ ստուերների նման անցնում են խուլ անտառով: Չորս ուժեղ երիտասարդներ ուսերի վրայ տանում էին մի գերան, որի վրայ տարօրինակ մի մեծ փաթթոց է կապած: Դրանց յետևից տանում են երկու պատգարակ. պատգարակներից վերջինը աչքի է ընկնում իր գեղեցիկ ոսկեգօծ տեսքով. նրա վրայ նստած է մէկը, որ իր արտաքինով խիստ տարբերում է միւսներից և ինչ-որ հրամաններ է արձակում. երկրորդ պատգարակի վրայ նստած ծերունին ի կատար է ածում նրա հրամանները:

Վերջապէս այս շքերթը կանգ է առնում անտառի մէջ մի բաց տեղում:

Վառուում են խարոյկներ և բարերից կրակի վրայ սեղանանման օձաղ են կազմում:

Կատարւում են մի շարք տարօրինակ ծէսեր, աղօթքներ ու երգեր: Քրմապետի հրամանով այն գերանը, որի վրայ մեծ փաթթոցն էր, մի ծայրով թաղում են գետնի մէջ. ապա ինքը՝ քուրմը սուր դանակի հարւածով կտրում է փաթթոցի պարանները: Նրա միջից ցած է գլորւում շիկահեր, բարձրահասակ մի երիտասարդ:

Դա մեզ ծանօթ Վիլլեմ Վան-դեր-Յոյլան էր: Նրան պատրաստում են զոհ բերել իրենց աստծուն: Զոհաբերութիւնը սովորաբար կատարւում է արևածագին: Ամենքն սպասում են այդ վայրկեանին:

Վիլլեմի դառնութեամբ լի դէմքը ուղղւած է դէպի երկինք. բայց երկինքը լուռ է...

\* \*

Կէս գիշերից քիչ առաջ նոյն անտառով գրնում էր մարդկանց մի այլ խումբ:

Նրանք մի բանի օր էին գնում էին անտառի նեղ կածաններով, անծանօթ տեղերով: Այսօր ամբողջ օրը առանց դադար առնելու քայլում էին:

Ամենքից առաջ գնում էր մի հսկայ տղամարդ և միւսներին ճանապարհ բաց անում. նա ոտքից մինչև գլուխ զինւած էր:

Դա նաւապետ Շտիւրմերն էր:

Նաւապետի հետ հաւասար գնում էր ճարպիկ, արագաշարժ ու վայելչակազմ մի աղջիկ, համարեա կիսամերկ. նրա սև մազերը լայն փուլածքով ցած էին իջնում և ծածկում մերկ ուսերը: Աչքերը վառւում էին տենդային կրակով, իսկ շրթունքները սպրդնել էին յուզմունքից ու յոգնածութիւնից:

Նրանց հետևում էին մի բանի նաւաստիներ և Բատաւիայի ոստիկաններից մէկը:

Բոլորն էլ խիստ յոգնել էին. նաւապետը հրաման տւեց կանգ առնել և քիչ հանգստանալ: Ամենքն էլ փուլեցին գետնին: Միայն աղջիկը ոտքի վրայ մնաց:

— Շտապէ՛ք, նաւապետ, շտապէ՛ք, ասում էր աղջիկը. այսօր վերջին գիշերն է. եթէ ուշանանք, Վիլլեմին կենդանի չենք գտնի:

— Մենք բոլորս ուժասպառ ենք եղել, Սամվաթա, ասաց Շտիւրմերը. մարդիկ հազիւ բաշտեն տալիս իրենց ոտքերը. եթէ կարողանայի մենակ ազատել նրան քո ազգակիցների ձեռքից...

— Նրանք իմ բարեկամը չեն, այլ ոխերիմ թշնամին, պատասխանեց աղջիկը ոտքը խփելով գետնին. նրանք սպանեցին իմ հօրը, որ սպիտակ էր, ձեր ցեղից: Այժմ էլ ուզում են սպանել Վիլլեմին, այդ բարի ու սիրելի տղային:

Օ՛հ, նաւապետ, եթէ իմանայիք, թէ որքան եմ չարչարւել, որպէսզի կարողանամ հասկանալ թէ ինչ էր ուզում ինձանից Վիլլեմը. չէ՞ որ իմ

հօրը սպանեցին այն ժամանակ, երբ ես երեխայ էի և չկարողացայ նրա լեզուն սովորել: Իսկ Վիլլեմը ոչ մի խօսք չըզգիտէ մեր լեզուով:

Ես օգնեցի նրան փախչել. բայց այս շները նրան կրկին բռնեցին. նա պաշտպանոււմ էր առիւծի նման. իր ձեռքերով խեղդեց նրանցից երեքին:

Սամվաթան այնպիսի հիացմունքով էր պատմում Վիլլեմի քաջագործութեան մասին, որ պարզ ցոյց էր տալիս, թէ նա ջերմ սիրով կապած էր այդ տղայի հետ:

Շտիւրմերի հազար ու մի փորձութեան բովից անցած այդ մարդու ուշադրութիւնից չէր կարող խուսափել այդ բանը և նա գլուխը շարժելով փնթփնթաց ինքն իրան.

— Չետաքըբեր է, թէ ինչով կը վերջանայ այս պատմութիւնը...

— Երբ մենք նորից հանդիպեցինք, շարունակեց աղջիկը, Վիլլեմը արմաւենու տերևի վրայ իր արիւնով «սրբազան» գրեր դրոշմեց. ես հասկացայ, որ այդ գրերը մեծ «զօրութիւն» ունին և կարող են նրան փրկել և ինձ էլ ազատ պահել ամեն շարիքից:

— Խեղճ աղջիկ, մըմնջաց Շտիւրմերը. կարծում է, թէ այդ գրերը առանձին զօրութիւն ունին որպէս թալիսման. այն ինչ Վիլլեմը պարզ նամակ էր գրել ինձ և յայտնել իր վտանգաւոր դրութեան մասին:

— Այդ սրբազան գրերը դրի ծոցս և ճանա-

պարհ ընկայ. որպէսզի մարդկանց չըհանդիպեմ՝ գնում էի անտառի ամենավտանգաւոր տեղով. պիտէի, որ ոչ մի գիշակեր կենդանի ինձ չէ: Պատի, քանի այդ գրերը ծոցումս էին: Վերջապէս հասայ ձեր հսկայ կախարդական քաղաքը:

— Միթէ Բատաւիան այդքան մեծ և կախարդական քաղաք է, ժպտալով հարց տուեց Շտիւրմերը, նկատելով կիսավայրենի աղջկայ միամտութիւնը:

— Այո, մեծ և կախարդական քաղաք է Բատաւիան, պնդեց աղջիկը աւելի շեշտելով: Ես գիտեմ, որ դու Լարոդ ես Վիլլեմին ազատել. գնանք, նաւապետ, բաւական է հանգստանալ:

Սակայն ոստիկանութեան պաշտօնեան ուժից ընկել էր և առաջ գնալ չէր կարողանում. որոշեցին նրան թողնել այդտեղ, և, որպէսզի մասամբ անվտանգ մնայ, խորհուրդ տւին բարձրանալ ծառը և սպասել այդտեղ նրանց վերադարձին:

— Շարժեցէք, տղերք, քանի ուշ չէ, ասաց Շտիւրմերը և առաջ ընկաւ:

\* \* \*

Հարաւային արևի կիզիչ ճառագայթները բոցավառեցին երկինքը:

Այդ փառաւոր տեսարանին էր սպասում ըրրմապետը, որ բնութեան չքնաղ գեղեցկութեանը զոհ բերէ մարդ-արարածին, նրա արիւնով բժաւորէ այդ անբիծ մաքրութիւնը:

Նա՞ ձախ ձեռքով բռնած Վիլլեմի ճակատը՝  
աջ ձեռքով շիկացած երկաթը մօտեցրեց նրա աջ  
աչքին:

Գեռ երկաթը չէր հասել աչքին, երբ լսեց  
մի շառաշիւն, և քրմապետի աջ ձեռքը շիկա-  
ցած երկաթի հետ պոկւեց նրա մարմնից և թը-  
ռաւ մացառուտների մէջ:

Գրան հետեւեց համազարկերի շաշիւնը և  
վայրկենաբար մաքրեց բատտակներից գոհաբերու-  
թեան սիւնը, որից Վիլլեմն էր կապւած:

Թշնամին սակայն ուշքի եկաւ և հեշտութեամբ  
տեղի չըսուեց. սկսեց մի կատաղի կռիւ լաւ  
գինւած եւրոպացիների և բատտակների միջև,  
որը մի քանի րոպէ միայն տևեց: Կատարելա-  
գործւած եւրոպական զէնքը տեսաւ իր գործը:

Հսկայ նաւապետը սիւնի մօտ տեղ բռնելով՝  
անվեհեր արիութեամբ յետ էր տալիս թշնա-  
մու յարձակումը, որը ուզում էր սիւնին կապ-  
ւած գոհին կտոր-կտոր անել:

Բատտակների դիակներից մի բլուր կազմւեց  
սիւնի մօտ: Վերջապէս միսները ընկճւած ցրւեցին  
անտառի մէջ:

Յաղթողների ձեռքը գերի ընկան վիրաւոր-  
ւած քրմապետը, ռաջան, նրա կիւնը և մի  
քանի քուրմեր:

Սակայն ո՞վ ազատեց Վիլլեմին. Սամվաբան,  
որը, կուի բորբոքւած բոպէին վագեց դէպի սիւնը  
և քանդեց Վիլլեմի կապերը:

Վիլլեմը ուշագնաց վայր ընկաւ. Սամվաբան  
զրկեց նրան, գլուխը դրեց իր ծնկան. անվերջ  
համբուրում էր և իր շնչով կենդանութիւն տա-  
լիս սպրդնած ու սառը դէմքին:

— Ուշքի եկ, ուշքի եկ, իմ տէր, — ասում  
էր աղջիկը և համբուրում Վիլլեմի սառն աչքերը:

Վիլլեմը կարճ ժամանակից յետոյ ուշքի ե-  
կաւ: Մի շաբաթից յետոյ Շտիւրմերի փոքրիկ  
խումբը գերիների հետ միասին ողջ-առողջ հա-  
սաւ Բատաւիա:

Նաւաստիների յայտնւելը քաղաքի ազգաբնա-  
կութեան մէջ անսովոր իրարանցում առաջ բե-  
րեց. նրանց դիմաւորեցին ովացիաներով:

Մեծ յարձակման ենթարկւեց կառավարու-  
թիւնը առաջադէմ թերթերի կողմից, առանձնա-  
պէս նահանգապետն ու նրա քարտուղարը՝ թոյլ  
հսկողութիւն ունենալու պատճառով բնիկների  
վրայ, որոնք դեռ շարունակում են մարդկային  
գոհեր մատուցել՝ դրդւած վայրենի բնազդներից:

Խիստ քննադատուում էր քարտուղարը՝ դէպի  
Վիլլեմը ցոյց տւած իր համարեա թշնամական  
իերարբերմունքի համար: Ոստիկանութիւնը դա-  
տապարտուում էր իր թուլութեան համար, որ չէր  
կարողանում գտնել Եան Բլոկհուիզին:

Վիլլեմն ի նշան երախտագիտութեան առա-  
տօրէն վարձատրեց իրան ազատող խմբին և  
ապահովացրեց նրանց ընտանիքները:

Նա փողի պակասութիւն չէր քաշում, որով-  
հետև նրա նոտարը արդէն հասկացել էր իր

սխալը և նրա դրամագլուխը վերածելով շահաւէտ  
ակցիաների յաջողացրել էր մեծ գումարներ  
ստանալ:

Վիլլեմը վարձատրեց և այն ոստիկանին, որ  
ճանապարհին յոգնածութիւնից ծառն էր բարձ-  
րացել:

Շտիւրմերը և նրա խումբը այնքան ազնիւ  
զտնւեցին, որ այդ մասին ոչ ոքի չը պատմե-  
ցին, որպէսզի այդ ոստիկանն ևս վարձատրու-  
թիւն ստանայ իր մեծաւորից և առհասարակ  
բարձրանայ իր պաշտօնի մէջ:

Այսպիսով ազատուեց Վիլլեմ Վան-դեր-Յոյլպը:  
Եւ երբ Շտիւրմերի հետ կրկին մտան «Ալ-  
բատրոս» նաւը, նրանց հետ էր նաև Սամվա-  
բան, որից Վիլլեմն ուխտել էր յաւիտեան չը  
բաժանուել:

VIII

Շտիւրմերը իր դերի մէջ էր. նա վաղօրօք  
տեսել էր ամեն պատրաստութիւն, ձեռք էր բե-  
րել անհրաժեշտ մեքենաներն ու վարպետներ՝  
«Ոսկէ նաւը» ծովի յատակից վեր բարձրացնելու  
համար:

Մի առաւօտ մեծ ժողովուրդ էր հաւաքուել  
նաւահանգստում՝ ճանապարհ դնելու մեր արկա-  
ծախնդիր ձեռնարկուներին:

Ալբատրոսը ուղևորուում էր դէպի «Ոսկէ  
նաւի» խորտակած տեղը:

Այդտեղ էր և Սամվարան:

— Սովորի՛ր մեր լեզուն, Սամվարա, մինչև  
կը վերադառնամ, — ասաց Վիլլեմը և սեղմելով  
նրա ձեռքը մտաւ նաւը:

Վիլլեմը որոշել էր Սամվարային իր հետ  
Հոլլանդիա տանել. բայց դրա համար հարկաւոր  
էր, որ աղջիկը սովորէր հոլլանդական լեզուն.  
բացի դրանից Վիլլեմը ցանկանում էր, որ Սամ-  
վարան կրթութիւն ստանար, մանաւանդ որ նա  
դեռ փոքր էր, ընդունակ սովորելու. մի խօսքով  
Վիլլեմը կամենում էր այդ կիսավայրենի աղջկան  
հոգով-մտքով եւրոպացի դարձնել:

Այդ պատճառով նա Սամվարային տուել էր  
մի կրթւած ընտանիք, ուր նա ապրում էր և  
սովորում մեծ եռանդով:

Երբ Ալբատրոսը ափից բաւական հեռացել  
էր, Շտիւրմերը յանկարծ յիշելով անցած  
դէպքը, խնդրեց Վիլլեմին պատմել իրեն, թէ  
նրան ինչպէս էր խաբել Եան Բլոկհուիզը և ձգել  
բառտակների ձեռքը:

— «Երբ դուք այն առաւօտը նահանգապե-  
տի մօտ գնացիք, սկսեց Վիլլեմը, ես նաևից հե-  
ռացայ քիչ թարմանալու համար: Միտք չունէի  
հեռու գնալու, քանի որ ամեն ըրպէ՛ դուք կա-  
րող էիք վերադառնալ, և ես հարկաւոր կը լինէի  
ձեզ:

«Ըստ երևոյթին Եան Բլոկհուիզը սպա-  
սում էր ինձ, որովհետև հենց որ ափ դուրս  
եկայ, նա կարծես գետնի տակից բուսաւ իմ

առաջ: Գրկաբաց վազեց դէպի ինձ, փաթաթեց վզովս. լաց էր լինում և ուրախանում, ոտ ես կենդանի եմ. համբուրում էր, անվերջ համբուրում: Նրա համար իմ կենդանի մնալը և զարմանալի էր և անչափ ուրախութիւն էր պատճառում:

Պատմեց, թէ մեր նաւի խորտակման ժամանակ նա տեսել էր, որ ես խեղդւում եմ, ուզեցել էր ինձ ազատել, այդ ժամանակ մի հարւած երկուսիս էլ ուշաթափ է արել: Ապա նա ուշքի է եկել, նորից ուզեցել է ջուրն ընկնել ինձ ազատելու համար, բայց ձեռք ու ոտքը կապել են և թոյլ չեն տւել:

«Վերջապէս ինքը մի կերպ ազատւել է և ափ դուրս եկել. իր մօտ ոչ մի կռպէկ չի ունեցել, երկար ժամանակ քաղցած թափառել է, ապա չնչին վարձով ծառայութեան է մտել, ուր սարսափելի չարչարելիս են եղել նրան:

«Նա անչափ ուրախանում էր լիմ ազատութեան համար, որ չեմ կարող պատմել: Իմ ազատելը իր ազատելուց աւելի էր գնահատում: Վերջապէս, ասում էր, երկուսս էլ ազատւել ենք, հիմա կարող ենք մեր նպատակին հասնել. ջրի տակից կը հանենք «Ոսկէ նաւը»: Վիլլեմ, դու կը կատարես քո նախնիքների կտակը... ապա մենք միասին կը գնանք սովորելու. համալսարան կը մտնենք, ժամանակին ձեռք կը բերենք մի մի մասնագիտութիւն և մարդկութեան համար շատ օգտակար կը լինենք:—Երբ ես

յայտնեցի, որ կորցրել եմ և՛ մօտիս փողը, և՛ կտակը իր ծրագրով, թէ մի մարդ է դուրս եկել, որ իրան անւանում է Վիլլեմ Վան դեր-Տոյլպ, ուզում է տիրանալ իմ ամբողջ կարողութեան, նանը կատարեց, փրփրեց, իրան ձեացրեց այնպիսի դրութեան մէջ, որ ես կարծեցի, թէ կաթլածահար կըլինի, այնքան անսպասելի էր համարում այդ իրեն համար:

«Ապա նա որպէս թէ ուշքը հաւաքելով կարողացաւ յիշել, թէ ո՞վ կարող էր լինել այդ կեղծ խաբեբան:—Իսկ այն սևամազ նաւաստին կը լինի, ասաց նա, որ հենց նաւում քո յետևից էր ման գալիս. ես մի քանի անգամ նկատել էի: Մի օր էլ քո բարձի մօտից հեռացրի նրան: Նա էլ մեզ հետ ազատեց նաւի խորտակման ժամանակ. այս քանի օրս ես նրան տեսայ այստեղ, Բատաւիայում, մի շքեղ կառքով անցնելիս, ըստ երեւոյթին սեփական. նրան ռոտեղից է այնքան փող, որ իր սեփական կառքը ունենայ, և նա, երեկւայ նաւաստին, անչափ շքեղ էր հագնւած: Եւ նա այդ ամենը պատմում էր այնքան բնական, այնքան անկեղծ, որ ես չէի կարող չը հաւատալ:

«Նա ստիպեց ինձ գնալ և գտնել այդ սրիկային. այդ նպատակով դիմեցինք նրա ծանօթ փաստաբանին խորհուրդ հարցնելու համար. նրան տանը չը գտանք. նա գնացել էր «Ամբրիկական բարը» գլխաւոր դատախազի հետ խորհրդակցելու:

«Մենք էլ գնացինք «բար»։ Այդտեղ Նանը  
 զովացուցիչ մի խմիչք առաջարկեց ինձ։ Երբ  
 խմեցի, կարծես գլխիս մի հարևած տւին. չէի  
 կարողանում հասկանալ, թէ ինչ է կատարուում։  
 Յիշում եմ միայն, որ ես խնդրում էի Նանին  
 ինձ մեր նաւը տանել, բայց նա փոխանակ նաւը  
 տանելու՝ փողոցից փողոց էր քաշ տալիս ինձ։

«Թէ ուր էինք մենք, չը գիտէի. մութ կեր-  
 պով յիշում եմ մի կիսախաւար սենեակ, դեղին  
 երեսով մարդկանց։ Այդտեղ ինձ ծխել տւին,  
 կարծեմ, օպիում, իմ ուշքը գնաց։ Թէ ինչ եղա-  
 ւայնուհետև — չը գիտեմ։

«Երբ ուշքի եկայ, տեսայ ձեռք ու ոտքս  
 կապած, չինական մի կեղտոտ մակոյկի մէջ։  
 Ոյժ գործ դրի և ձեռքերիս կապերը կտրտեցի։  
 Մակայն մի քանի մարդիկ յարձակեցին վրաս։  
 Ես ուզում էի ինձ ջուրը ձգել, բայց նրանք  
 պահում էին։ Սկսեցի աղաղակել, օգնութիւն  
 կանչել։ Մալայեան մի մակոյկ մօտենում էր  
 մեզ. երևի օգնութեան էր գալիս։ Զինացիք նրան  
 չէին թողնում մօտ գալու։ Այդ պահին գլխիս  
 խփեցին, ես նորից ուշքս կորցրի։

— Այդ մալայեան մարդուն մենք պատահե-  
 ցինք, և նրանից իմացանք, թէ ովքեր են եղել  
 քեզ փախցնողները, — ասաց Շտիւրմերը։

«Երբ ես ուշքի եկայ, շարունակեց Վիլլեմը,  
 գիշեր էր և մակոյկը մօտեցել էր արիւն. ինձ  
 դուրս քաշեցին և տարան փակեցին մի խրճիթի  
 մէջ։ Մի քանի օր մնացի այդտեղ քաղցած. եր-

բեմն գալիս ու ծեծի էին ենթարկում ինձ։  
 «Յետոյ ինձ տարան երկրի խորքը. թէ որ-  
 քան ժամանակ տևեց այդ ճանապարհորդութիւնը,  
 չեմ յիշում, ես համարեա խելակորոյս էի եղել։  
 «Քիչ հանգստացայ, երբ տեղաւորեցին բառ-  
 տակների մի գիւղում. այդտեղ ծանօթացայ Սամ-  
 վաբայի հետ։ Որոշել էին, որ նա ցերեկները  
 հսկէ ինձ և կերակրէ։

«Շուտով տեսայ, որ այդ աղջիկը շատ բա-  
 րեհոգի է, նա ցաւակցում էր ինձ և խնամում  
 մօր պէս։ Նրա օգնութեամբ ուզեցի փախչել։

«Ինչպէս գիտէք, փախուստս չը յաջողեց,  
 բայց փրկեց ինձ։ Բատտակները ամիսը երկու  
 անգամ զոհաբերութիւն են կատարում իրենց  
 աստծուն։ Երբ ինձ բռնեցին, այդ ծէսի օրն ան-  
 ցել էր։ Ես ունէի երկու շաբաթ ժամանակ մին-  
 չև հետևեալ տօնը։ Օգտուեցի այդ ժամանակից և  
 Սամվաբային նամակով ուղարկեցի ձեզ մօտ,  
 օգնութիւն խնդրելու։ Այնուհետև թէ ինչ եղաւ  
 — արդէն ձեզ յայտնի է»։

— Պէտք է ասել, որ Սամվաբան հազազիւտ  
 հոգեկան յատկութիւնների տէր աղջիկ է և  
 նրանից լաւ մարդ դուրս կը գայ, — ասաց լուրջ  
 տոնով Շտիւրմերը։

Վիլլեմի դէմքը շառագունեց Շտիւրմերի  
 այդ խօսքերից։

Այդտեղ խօսակցութիւնն ընդհատուեց։ Իսկ  
 «Ալբատրոսը» լողում էր ու լողում՝ մօտենալով  
 կրակահոլա կղզուն, «Ոսկէ նաւի» դամբարանին։

XI

ՍՏՈՐԵԲԿՐԵԱՅ ՈՅԺԵՐԸ

1883 թւի օգոստոսի 26-ին, կէսօրւայ մօտ, «Ալբատրոս» նաւը հասաւ Կրակադուա կղզիները և խարխիս ձգեց զլիաւոր կղզին շրջապատող ծովածայրերից քիչ հեռու:

Նաւապետ Շտիւրմերը դիտմամբ չըմտաւ կղզու ծովածոցը, որը լի էր ստորջրեայ քարերով և փոթորիկի ժամանակ վտանգաւոր: Այնտեղ, ուր Ալբատրոսը կանգ առաւ, բաւական ընդարձակ էր և հնարաւորութիւն էր տալիս ցանկացած ժամանակ ազատօրէն ծով դուրս գալ:

Անյարմարութիւնն այն էր միայն, որ «Ալկմահարը» ջրի տակից բարձրացնելու համար պէտք է նաւից քիչ հեռանային, և առհասարակ այդ աշխատանքները նաւից հեռու էին կատարելու:

Թէև Չտիւրմերը ամեն հնարաւոր միջոց ձեռք էր առել շուտով սկսելու այդ աշխատանքը, այնուամենայնիւ նրան և Վիլլեմին այնքան էլ շուտ չըյաջողուեց հասնել իրենց ցանկութեան:

Այս անգամ բնութիւնն եկաւ արգելք դնելու նրանց առաջ:

Ալբատրոսը նոր էր կանգ առել, երբ ամենքը նաւի մէջ մի անսովոր ճնշում զգացին, կարծես օդը, մաքուր օդը պակասում էր, և ամենքը խեղդուում էին: Այդ ճնշումը աւելի ուժեղ էր դրսում, տախտակամածի վրայ:

Երբ դիտում էին չորս կողմը այդ տարօրինակ երևոյթի պատճառը գտնելու, պարզ նկատեցին, որ կզգու վրայից ծխի մի խոշոր ամպ էր բարձրանում: Նշանակում է կղզին հրաբուդիս է արձակում:

Եւ իրօք, շուտով տարածւեց ծծմբային հոտը և երևացին հրաբուդիսի բոլոր նշանները:

Մինչ այդ վրայ հասաւ գիշերը: Զգուշութեան համար Շտիւրմերը պահապաններ նշանակեց և պատւիրեց խիստ հսկել, որովհետև—յայտնեց նա—վտանգ է սպասուում ոչ միայն բնութեան կողմից, այլ և՛ մարդկանց:

—Երևի դուք կարծում էք, նաւապետ, թէ Եան Բլոկհոլիզը կարող է ինթրիզներ սարքել, ասաց Վիլլեմը դիմելով Շտիւրմերին:

—Ոչ միայն կարծում եմ, այլ և հաւատում եմ. նրանից ամեն վատ բան կարելի է սպասել: Դու քո բարի բնաւորութեամբ մի մեծ թշնամի ես պատրաստել քեզ համար: Ես ասում եմ, որ նա դադար չի առնի, մինչև որ երկուսիցդ մէկը չ'ոչնչանայ: Այս աշխարհը երկուսիդ համար նեղ է, և ձեզանից մէկը անշուշտ փոխւելու է այն աշխարհի:

—Զէք սխալուում արդեօք, նաւապետ, այդպիսի դաժան և անգութ կարծիք յայտնելով Եան Բլոկհոլիզի նկատմամբ: Ինչո՞ւ նա չպիտի բաւականանայ խաբէութեամբ կորզած փողով, որը նրա համար ահագին գումար է, և ինձ հան-

գիտ թողնի: Ես ի սէր մեր հին բարեկամութեան պատրաստ եմ մոռանալ նրա բոլոր արարքները...

— Գիտե՞ս, Վիլլեմ, դու անուղղելի լաւատես ես: Ո՛չ, սիրելիս, այդպէս չի կարելի: Դու բոլորովին զուր ես թողել խաղաղ Եւրոպան, քո հայրենի տունը և ընկել հարաւ, վայրենիների մէջ, ուր ամեն քայլավորութեամբ պէտք է բռունցքի հարւածով պաշտպանես կեանքդ: Ճանապարհորդել՝ այն էլ այսպիսի վտանգաւոր երկրներում՝ քո գործը չէ: Գնա՛ Ամստերդամ, ամուսնացիր և խաղաղ կեանք վարիր— այդ է իմ բարեկամական խորհուրդը: Հարաւային երկիրները, ճիշտ է, գրաւիչ են ու գեղեցիկ, բնութիւնը հարուստ է ու փարթամ, բուսականութիւնը վերին աստիճանի ճոխ է: Ժառն այստեղ քսան տարւայ ընթացքում վիթխարի կերպարանք ու տեսք է ստանում, այն ինչ հիւսիսում դրա համար մի դար է հարկաւոր:

Այստեղ ծովերը մարգարիտ են հիւսել իրենց կրծքին, լեռները իրենց արգանդում ոսկի, արծաթ, ալմաստ ու այլ անսպառ հարստութիւն են պարփակում...

Սակայն բնութիւնը որքան առատ է և կեանքը հարուստ, մարդկային կեանքը նոյն չափով անկայուն է և ենթակայ բիւրաւոր վտանգների: Այստեղ ամեն կողմ մահւան հոտ է փչում:

Ոչ մի տեղ չը կան այն քանակութեամբ թունաւոր սողուններ, սարսափելի միջատներ,

այնքան տարափոխիկ հիւանդութիւններ, այն աստիճան վայրենութիւններ, ինչ որ հարաւն է տալիս:

Յաճախ ասում ենք, թէ կեանքը մեզ մօտ գին չունի: Ճիշտ է, եւրոպական կոիւնները, թէկուզ հենց վերցնենք Նապոլէօնեան կոիւնները, անագին թւով մարդիկ են ոչնչացրել, բայց ի՞նչ համեմատութիւն կարող է լինել այդ կոիւնների և այն դարաւոր ընդհարումների միջև, որ մալայեան զանազան ցեղեր անընդհատ կատարում են և փոխադարձաբար իրար ոչնչացնում: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ միլիոնաւոր մարդիկ են այստեղ բնաջինջ լինում:

Այո, կեանքն այստեղ հետաքրքրական է, բայց վատառողջ:

Բնորոշ է այն, որ համեմատաբար ստանարիւն չինացիք անգամ տարւում են այդ վայրենի կրթով: Նրանցից են կազմւում ծովային աւազակների անագին խմբեր, որ արիւնալի կոիւններ են առաջ բերում թէ միմեանց և թէ օտարի հետ: Նրանք միշտ արիւնարբու են և անխնայ:

— Չեզ պատահել է հանդիպել ծովային այդ աւազակներին կամ, ինչպէս ասում են, ծովահէններին, հետաքրքրուեց Վիլլեմը:

— Շատ յաճախ, պատասխանեց Շտիւրմերը. բայց երբէք չէի ցանկալ, որ թշնամիս անգամ նրանց հետ գործ ունենար. մարդկութեան այդ տականքները սարսափելի կատաղի են:

Նրանք յարձակւում են նոյնիսկ մարտանա-

ւերի վրայ. Աստուած չանէ, եթ մի այդպիսի նաւ կամ ստորջրեայ քարին կառչի և կամ ծանծաղուտի վրայ նստի. բաւական է, որ նրանք տեսնեն, թէ նաւը անշարժ է և առաջ գնալ չի կարողանում, իսկոյն յարձակում են վրան:

Նման խօսակցութեամբ բռնւած Շտիւրմերն ու Վիլլեմը չէին զգացել, որ զիջերւայ կէսն արդէն անցել էր:

Վիլլեմը ծանր օդից ճնշւած գնաց նաւասենեակը հանգիստ առնելու: Իսկ Շտիւրմերը շրջեց նաւը՝ ստուգելու, թէ սրտեղ ինչ են անում. արդեօք նաւի մէջ ամեն ինչ կարգի՞ն է:

Այդ պահին Շերվուդը, որ դիտում էր շրջապատը, ձայն տուեց թէ ծովահէններ են գալիս դէպի նաւը:

Շտիւրմերը յանկարծակիի եկած այդ լուրից, թէև տխրեց, բայց կատարեալ սառնասիրտ ու գիտակ իր գործին հրաման արձակեց՝ դիրքերը բռնել և պատրաստ լինել դիմադրելու թշնամուն: Միւս կողմից կարգադրեց շոգեմեքենաները վառել, որ հնար լինի ծով դուրս գալ: Տարաբախտաբար հենց երեկոյեանից մեքենայի հնոցը մարել էին, շոգի չկար և նաւը չէր կարող իսկոյն շարժւել:

Շտիւրմերին յայտնեցին, որ ամենաքիչը մի ժամ կը տևի, մինչև որ հնոցը վառւի և հարկաւոր քանակութեամբ շոգի ստացւի: Ուրեմն մի ժամ նաւը կանգնած էր մնալու:

Կարծես այդ բանը նկատել էր թշնամին:

Փրօք, մի քանի ըոպէ չանցած՝ թշնամին արագ մօտեցաւ և իր բազմաթիւ նաւակներով ու մակոյկներով շրջապատեց շոգենաւը:

Շտիւրմերը թոյլ տուեց, որ թշնամին մօտենայ, որպէսզի աւելի մեծ հարւած հասցնի նրան:

Յարմար ըոպէին շոգենաւի թնդանօթները բացւեցին և հարաւային կողմից մօտեցող թշնամու նաւակները մեծ աղմուկով ծովը սուզւեցին:

Սակայն այդ բանը չըզսպեց թշնամուն. նա աւելի յանդուգն թափով առաջ եկաւ և սկսեց կատաղի և արիւնալի մի կռիւ:

Շոգենաւի թնդանօթները տասնեակ նաւակներ էին խլում թշնամու շարքերից. բայց զսպել թշնամուն անկարելի էր:

Թշնամին այնքան մօտեցաւ, որ նրա մի քանի խմբերը նոյնիսկ ցատկեցին շոգենաւը: Այդտեղ մեծ հերոսութիւն գործեց Վիլլեմը. թէև նա վերք էր ստացել, այնուամենայնիւ Շտիւրմերի հետ միացած՝ իր ուժեղ հարւածներով թշնամու այդ համարձակ յարձակումը յետ մղեց: Մինչ այդ թնդանօթները լցրին կոտորակներով և տեղացին թշնամու գլխին, որը կարծես զգալով իւր անգորութիւնը, հետզհետէ թուլանում էր:

Վիլլեմը թշնամու յարձակումը յետ մղելուց յետոյ ազատ շունչ քաշեց, և հենց այդ միջոցին էլ թշնամու նաւակներից մէկում նկատեց Եան Բլոկհուիզին:

— Նա է, նա. Եան Բլոկհուիզը, ասաց նա դառնաբով Շտիւրմերին:

Շտիւրմերը, որ նրանից առաջ էր նկատել այդ, ատրճանակն ուղղել էր դէպի նա, որպէսզի կանխէ թշնամուն և ազատէ Վիլլեմին. որովհետև Եան Բլոկհուկը իր հերթին ատրճանակը ուղղել էր Վիլլեմի վրայ:

Շտիւրմերը ճիշտ որ կանխեց թշնամուն. նա արձակեց ատրճանակը, բայց գնդակը հասաւ նպատակին թէ վրիպեց— ոչոք չիմացաւ:

Այդ միջոցին ծովի ջուրն այնպիսի թափով իրար անցաւ և այնպիսի շարժումներ գործեց, որ թշնամու նաւերը իրար անցան ու խորտակեցին, իսկ շոգենաւը տաշեղի նման ալիքներէ գերկը ձգեց: Մի քանի վայրկեան շոգենաւը անձնատուր եղաւ տարերային այդ խաղին:

Վերջապէս իմաց տւին, թէ շոգին պատրաստ է. Շտիւրմերը մի ճարպիկ ոստիւնով անցաւ դեկի մօտ և իր կուռ ձեռքով շարժեց դեկի անիւը, գերմարդկային ուժով դեկին հարկաւոր ուղղութիւնը տւեց:

X

ԾՈՎԻ ԳԱՆՁԸ

Կրակադուայի հրաբուլդիսը տեւեց շատ օրեր: Հրաբուլդիսի հետ միաժամանակ տեղի ունեցաւ սոսկալի երկրաշարժ, որ շատ փոփոխութիւններ առաջ բերեց թէ ծովի յատակում և թէ կղզիների վրայ: Շատ մանր կղզիներ անյայտացան

և, ընդհակառակը, առաջ եկան նոր փոքրիկ կղզիներ:

Մի խօսքով երկրի տեղազրական պատկերը այդ շրջանում խիստ փոխւեց: Եղան մարդկային մեծաքանակ գոհեր:

Մարեց հրաբուլդիսը, դադարեց երկրաշարժը. կեանքը կրկին իր սովորական ընթացքն ընդունեց:

Մարդիկնորից հաստատուեցին այդ կղզիներում:

Առաջին եւրոպական նաւը, որը յայտնեց այդ վտանգաւոր ջրերում՝ «Ալբատրոսն» էր, որ գալիս էր կրկին նաւապետ Ֆրէդ Ծտիւրմերի դեկավարութեամբ:

Առաւօտը վաղ Ալբատրոսը ամենայն զգուշութեամբ մօտեցաւ Կրակադուա կղզուն. նա գնում էր շատ դանդաղ, ըսպէ առ ըսպէ ստուգուած էր իր ճանապարհը, որպէսզի ստորջրեայ ժայռի չըղիպչի:

«Ալկմահար» նաւը գտնել այժմ շատ դժուար էր, որովհետև, ինչպէս ասացինք, ծովի յատակը անսպասելի փոփոխութեան էր ենթարկւել:

Ջրասոյգները շատ փնտռեցին, շատ ման եկան, բայց Ալկմահարը չկար ու չկար: Ոչ ոք յոյս չունէր, թէ կարելի է այդ նաւը գտնել:

Միայն Շտիւրմերի երկաթէ կամքն էր, որ ստիպում էր եռանդով փնտռել. միայն նա էր, որ յոյսը չէր կորցրել և ամբողջ հոգով նւիրւած էր այդ գործին: Նա ամուսնացել էր, որ չի հեռանայ այդտեղից, մինչև ծովի յատակը տակնուվրայ

չանէ և կատարելապէս չըհամոզւի, որ Ալկմա-  
հարը երկրի խորքն է կուլ գնացել:

Մի անգամ էլ նա սուզւեց ու երկար ժա-  
մանակ մնաց ջրի մէջ, և երբ դուրս եկաւ ջրից,  
նա ծանր շունչ էր քաշում ու երեսի գոյնը  
թուել էր:

Այս անգամ նա շատ խորն էր գնացել և ոչ  
միայն գտել էր «Ոսկէ նաւը», այլ և մտել էր  
նրա մէջ և ստուգել, որ իրաւ ոսկու արկղները  
նրա մէջ են:

Այդ լուրը անպատմելի ուրախութիւն պատ-  
ճառեց ամենքին:

Առանց բացառութեան բոլորի տրամադրու-  
թիւնը բարձրացաւ: Խինդ ու ծիծաղ համակեց  
ամենքին:

Հենց այդ միջոցին, որպէս հակապատկեր  
ընդհանուր տրամադրութեան, չինական մի նաւ՝  
լի դիակներով լողում էր դէպի Ալբատրոսը:  
Երբ այդ նաւը բաւական մտեցաւ, պարզ երե-  
ւաց, որ նրա մէջ մի մարդ խաչւած էր կայմին:

—Ո՛, Աստուած իմ, խաչւածը Եան Բլոկհո-  
լզն է... բացականչեց Վիլլեմը և ձեռքերով  
աչքերը ծածկեց ու մտաւ սենեակ:

Չինական այդ նաւը յուղարկաւորութեան  
ծանր տպաւորութիւն թողեց ամենքի վրայ:  
Չափազանց պինդ նեարդեր պէտք է ունենար  
մարդ, որ չըսոսկար այդ տեսարանից:

Շտիւրմերի նման մարդն անգամ չըդիմա-  
ցաւ և տխուր անցաւ նաւասենեակը:

Նաւաստիներից մէկը բացատրեց, թէ մա-  
լայեան ցեղի մէջ սովորութիւն կայ, որ կուլի  
մէջ ընկածներին լցնում են մի անպէտք նաւի  
մէջ և բաց թողնում ծովի երեսը. դա յարգան-  
քի նշան է:

Իսկ Եան Բլոկհոլզին խաչել էին այն պատ-  
ճառով, որ նա նրանց՝ մեծ խոստումներ անե-  
լով՝ խաբել, կուլի էր բերել և ի զուր կտորել  
ուել:

Ծովահէնները իրենց ընկերների վրէժը լու-  
ծել էին Եանին բռնելով նաւի կայմին...

\* \* \*

Միւս օրն առաւօտեան Ալբատրոսը խաբիսի  
ձգեց հենց այն տեղում, ուր թաղւած էր Ոսկէ  
նաւը: Սկսեց ջրի տակից ոսկու արկղիկները  
հանելու երկար ու ծանր աշխատանքը:

Այդ աշխատանքը տեւեց հինգ օր, որից յե-  
տոյ Ալբատրոսը հարուստ աւարը, ահագին քա-  
նակութեամբ ոսկին, մի գանձ, որ առասպելա-  
կան չափերի էր հասնում, վեր առած դիմեց  
դէպի Բատաւիա:

Խիստ շքեղ ու հանդիսաւոր էր Ալբատրոսի  
ընդունելութիւնը Բատաւիայում: Առանձնապէս  
մեծ աշխատանք էր թափել այդ ուղղութեամբ  
նահանգապետի՝ մեզ ժանօթ անձնական «քար-  
տուղարը». ամբողջ ոստիկանութիւնը ոտքի էր  
ելել:

Քաղաքը մեծ ցնծութեամբ ընդունեց Շտիւր-  
մերին և Վիլլեմին:

Առանձնապէս յուզիչ էր այն տեսարանը,  
երբ Սամվաթան դիմաւորեց Վիլլեմին. երիտա-  
սարդ սրտերը անկարող եղան դիմադրել ներքին  
մղումին և նրանք ամօթխածութիւնը մոռացած  
գրկախառնւեցին ջերմ համբոյրներով:

\* \* \*

Վիլլեմն ու Շտիւրմերը նախ ոսկին վերա-  
ծեցին դրամի և ապա նախօրօք կազմած ցուցակի  
համաձայն լիովին ապահովացրին այն բանւոր-  
ներին, նաւաստիներին ու կուռղներին և նրանց  
ընտանիքներին, որոնք այս կամ այն կերպ մաս-  
նակցութիւն էին ունեցել այդ գանձը ձեռք բե-  
րելու գործի մէջ:

Յատկապէս մեծ վարձատրութիւն ստացան  
կուռում մեռած նաւաստիների ընտանիքները:

Մի խոշոր գումար նւիրեց Հոլլանդական  
կառավարութեանը նահանգապետի անձնական  
բարտուղարի միջոցով, որ Բատաւիայում հիւան-  
դանոց շինելի ծովային ամեն կարգի աշխատա-  
ւորների համար:

Նահանգապետի բարտուղարը իր այդ աշ-  
խատանքի համար կառավարութիւնից շքանշան  
ստացաւ և բարձր պաշտօնի կոչւեց:

Իսկ վեց միլիոն ուրբլի փոխադրեցին Ամ-  
ստերդամ՝ նոտար Ռիւյգերցօոմի անունով, գլուխ

բերելու այն կտակը, որ թողել էր Վիլլեմին նրա  
հանգուցեալ պապը, այն է՝ շինել մի մեծ ապաս-  
տանարան ծովային ամեն կարգի բանւորների և  
ծառայողների համար:

Վիլլեմ-Վան դեր-Տոյլը իր բոլոր հաշիւ-  
ները ամենքի հետ մաքրելուց յետոյ, վերադար-  
ձրեց Շտիւրմերին այդ գործի վրայ նրա արած  
բոլոր ծախսերը. այնուհետև պսակեց Սամվա-  
թայի հետ:

Հարսանեաց հանդէսը տօնական կերպա-  
րանք ունէր, որ կատարեց իր ընկերների  
փոքրիկ շրջանում: Սաչեղբայրը Շտիւրմերն էր,  
իսկ հարսնեղբայրը՝ բարտուղարը:

Նախ բան պսակելը Սամվաթան, որ մա-  
լայեան լեզուով նշանակում է լուսաւոր, մկրտել  
էր և ստացել Լուսիկ անունը:

Հարսանիքից յետոյ Վիլլեմն ու Լուսիկը  
հրաժեշտ տալով իրենց բոլոր ծանօթ բարե-  
կամներին, Ալբատրոս նաւով դիմեցին դէպի Եւ-  
րոպա—դէպի Ամստերդամ:

Այստեղ վերջանում է պատմութիւնը,  
թէև բախտաւոր պատմութիւնը վերջ չունի,  
իսկ Վիլլեմն և Լուսիկը բախտաւոր էին...

Այդ օրից անցել է քառօրդ դար: Այդքան  
ժամանակէլայ ընթացքում շատ բան է անցել ու  
դարձել:

Ամստերդամում այժմ կանգնած է մի հոյա-  
կապ շէնք:

Իա «Մովային ապաստանարանն» է, ուր ապ-

րում ու խնամում են հինգ հարիւր հոգի ծովա-  
յին ծառայողներից՝ մեծ մասամբ աշխատանքի  
անընդունակ մարդիկ, ծերեր ու վաստակաւորներ:

Ապաստանարանի հոգաբարձուն է Վիլլեմ Վան-  
դեր Տոյլը. իսկ անմիջական կառավարիչն ու  
հսկիչը՝ Լուսիկ Վան-դեր Տոյլը:

Այդ բախտաւոր զոյգը անգաւակ է. սակայն  
այդ հանգամանքը երբէք չի խանգարում նրանց  
բախտաւորութեանը: Նրանք իրենց զաւակներն են  
համարում այն բոլոր որբերին, որ սնւում, մե-  
ծանում ու կրթւում են իրենց բացած որբանոց-  
ներում և դպրոցներում. դրանց են թողնելու  
իրենց ամբողջ կարողութիւնը մահից յետոյ:

Եւ ամեն օր, երբ Վիլլեմն ու Լուսիկը, երբեմ-  
նի վայրենի այդ աղջիկը, ողջունում են միմեանց  
տաք համբոյրներով, նրանք յիշում են անցած  
օրերը... և իրենց միշտ բախտաւոր զգում:



## Ե Ր Կ Ի Ի Ղ

(Մ. Ռիթթենբերգի)

—Նա մարդ չէ, պարոն ուսուչապետ, այդ  
հրէշ է, իսկական հրէշ մարդկային կերպա-  
րանքով:

—Չափազանցութիւն չէ՞ ձեր ասածը, պարոն  
Կորբոյլը:

—Չափազանցութիւն—երբէք: Դուք չէք ճա-  
նաչում Լարս Լարսէնին, ապա թէ ոչ չափա-  
զանցութիւն չէիք համարիլ նրան հրէշ անւանելու:

«Ի՞նչ մարդ է, իսկապէս Լարս Լարսէնը»:

—Միլիարդների տէր է, շոգենաւային աշ-  
խարհի թագաւորը: Միացեալ Նահանգների եր-  
կաթուղիների համարեա մի երրորդ մասը նրա  
ձեռքումն է, ամենքին յայտնի այն խոշոր «ապ-  
րանքափոխադրական տրեստի» գլուխն է: Սար-  
սափելի ժլատ մարդ է, ամենաազան կենդանին,  
որպիսին երկիրը կարող է ծնել:

—Միթէ նա այդպէս՞ փողասէր է:

—Յարգելի ուսուցչապետ, նա աշխարհումս  
ոչինչ չի ընդունում բացի նոր ու նոր միլիոններ  
դիզելուց, և, որ ցաւալին է, կանգ չի առնում ոչ

մի արգելքի առաջ. պատրաստ է նոյնիսկ սապ-  
նութիւն գործել, միայն թէ փող ձեռք բերի:  
— Պատրաստ է նոյնիսկ սպանութիւն գործելու.  
Հափազանցում էք, Կորբոյլդ:

— Երբէք, ուսուցչապետ: Հասկանալի է, որ  
նա ատրճանակով կամ դանակով չի գործում.  
Իհարկէ նա այդպէս չի վարւի և չի էլ կարող:  
Բայց նա չի դանդաղի փողոց շարտել, սովի դա-  
տապարտել երեք-չորս հարիւր բանւորական ըն-  
տանիք, եթէ դրանով մի քանի հարիւր հազար  
ուրբլի շահելու լինի:

Այս էլ իմացէք, պարոն ուսուցչապետ, որ  
իրօք նա փողի կարիք չունի. Ինքն է և մի փոքր  
տղայ—ահա նրա ընտանիքը: Նա երաժշտութիւն  
յսել անգամ չի ուզում, կեանքումը ոչ մի գիրք  
չի կարդացել. թատրոն երբէք չի գնում, ձիեր  
չի սիրում, հասարակութեան մէջ դուրս չի գա-  
լիս, ապրում է հին, կեղտոտ տան մէջ, պահում  
է մի քանի ծառայ, և յատկապէս պահպաններ,  
որ նրա թանկագին կեանքը պաշտպանեն ան-  
ակնկալ յարձակումներից: Մի խօսքով ապրում է  
կամաւոր բանտում:

— Սպասեցէք, Կորբոյլդ. ինչո՞ւ էք այդպէս  
վրդովւում: Որքան ես գիտեմ, այժմ Միացեալ Նա-  
հանգներում այդ տիպի մարդիկ հազազիւտ չեն:  
Կարնէջիի նմանները իհարկէ հազազիւտ բացա-  
ռութիւն են կազմում, բայց այնպիսիները, ինչ-  
պէս է ձեր Լարս Լարսէնը, սովորական երևոյթ  
են կազմում: Մէկը հաւաքում է մէկ միլիոն,

միւսը՝ տասը, երրորդը — քսան. ահա այդ է նը-  
րանց տարբերութիւնը: Անձամբ ճանաչում էի  
մի հասակաւոր տիկնոջ, միլիոններ թէր. որպէսզի  
ծառայի փող չըտայ, ապրում էր հասարակ կա-  
հաւորած սենեակներում, հիւրանոցում, և նրա  
շաբաթական ամբողջ ծախքն էր քսան ուրբլի:  
Նա ինքն էր իր ձեռնոցների ծակ տեղերը թելով  
լցնում. իսկ տարեկան ստանում էր մօտ տաս-  
ներկու միլիոն ուրբլի եկամուտ: Տեսնո՞ւմ էք.  
ուրեմն գուր էք վրդովւում:

— Ուսուցչապետ, ինչպէս երևում է, տեղեկու-  
թիւն չունէք, որ Լարս-Լարսէնը կոխ է յայտարարել  
մեր կօօպերատիւ կազմակերպութեան դէմ, որի  
ձեռքումն է Նիւ-Յօրք—Լիսսաբոն գիծը: Նա  
առաջ խլեց համարեա բոլոր ովկիանոսային խո-  
շոր ապրանքատար գծերը, այժմ էլ ուզում է տի-  
րանալ Նիւ-Յօրք—Լիսսաբոն գիծին: Իսկ այդ գի-  
ծըն է միայն, ուսուցչապետ, որ մի կտոր հաց է  
տալիս չորս հարիւր նաւատինների ընտանիքներին:

Տասնեկինս տարի է ինչ գոյութիւն ունի  
մեր կօօպերատիւը. նրան մասնակցում են նա-  
ւազնացութեան վրայ ծառայողները, աշխատա-  
ւոր ժողովուրդը:

Մեր կազմակերպութեան եկամուտը խոշոր  
չէ, այնուամենայնիւ մենք պահում ենք զպրոց-  
կազմակերպութեան անդամների գաւակների հա-  
մար, հին ծառայողներին տալիս ենք կենսաթո-  
շակ, օգնում ենք այրիներին ու որբերին:

Եւ միմիայն նրա համար, որ Լարս Լարսէնը

մտածում է այդ երկու-երեք հարիւր հազար իր համար աւելորդ գումարը իր գրպանը դնել, նա պահանջում է, որ մենք ընդհատենք մեր գործունէութիւնը:

— Ի՞նչ է, նա առաջարկում է, որ ձեր նաւերը ծախէք իրեն:

— Այո՛, բայց կէս գնով: Այդ դեռ բաւական չէ. նա իր գործերի մէջ ծառայութեան է ընդունում մեր նաւաստիներից միմիայն նրանց, որոնք կը համաձայնեն դուրս գալ կօօպերատիւից. այսինքն՝ այնպիսի պայման է դնում, որի կատարելը մեզ ամենիս կատարեալ քայքայման կը հասցնէ և բացի այդ՝ կը խորտակէ ծանր աշխատանքով ստեղծւած մի կօօպերատիւ — ինքնօգնութեան կազմակերպութեան հիմքը:

Եթէ Միութիւնը դադարի գոյութիւն ունենալուց, ո՞վ կը պահէ որբանոցը, դպրոցը, ուր կը ընթացում և դաստիարակում են մեր զաւակները:

Վերջապէս Միութեան դադարումով կը վերջանան կենսաթոշակները, և մի քանի տասնեակ մարդիկ զառամեալ հասակում փողոց կը նետուին:

Իսկ ապահովել մեր՝ այդ մի շարք հիմնարկութիւնները — Լարս Լարսէնի մտքով անգամ չի անցնի:

Նա պնդում է, որ այդ ամենը նրան չի վերաբերում:

— Ի՞նչ կարող էք այդ գիշակերին դիմադրել, հարցրեց ուսուցչապետը:

— Ինչպէ՞ս, ուսուցչապետ, — դառն ժպտաց նաւաստին:

— Թէ ինչպէս՝ ես չը գիտեմ, պատասխանեց Ուիչերլէյի ծերունի ուսուցչապետը, յայտնի հոգեբոյժը:

— Ի՞նչ գիտէք, Կորբոյլդ, որ ես բոլորովին հեռացած եմ ժամանակակից կեանքից և շատ հարցերում աւելի անտեղեակ, քան չինական գրագիտութեան մէջ տասնեակինգ տարեկան մի տղայ: Բացատրեցէք, ինչո՞ւ չէք կարողանում դիմադրել Լարս Լարսէնին ձեր այդ գործում:

— Որովհետև նա միլիոններ ունի... բայց աւելի լաւ է, լսեցէք, ես ձեզ պատմեմ, թէ ինչպէս անցեալ տարի Լարս Լարսէնը Սան-Ֆրանցիսկոյի և Ալեասկայի միջև շոգենաւային հաղորդակցութիւնը ամբողջովին իր ձեռն առաւ:

Այդտեղ գծի վրայ գործում էին շոգենաւային ութ ինքնուրոյն ընկերութիւններ, որոնք շարունակ իրար դէմ մրցելով, միշտ էլ ճանապարհավարձը պակասեցնում էին:

Մի գեղեցիկ օր Լարս Լարսէնը առաջարկեց նրանց միութիւն (տրեստ) կազմել. սակայն առաջարկած պայմանները նրանց ձեռնտու չէին. նրանցից չորսը համաձայնեցին, որովհետև նրա դէմ գնալը անօգուտ էին համարում. միւս չորսը իրար հետ միացան, որպէսզի ընդհանուր ուժերով պաշտպանեն իրանց շահերը: Այդ ժամանակ Լարս Լարսէնը իր ամենալաւ նաւերից յիսուն հատը յատկացրեց Ալեասկայի և

Ման-Ֆրանցիսկոյի ճանապարհի հաղորդակցութեան համար. թէ մարդիկ և թէ ապրանքը փոխադրուում էին չնչին վարձագնով: Հասկանալի է, որ Լարսէնին ամեն մի երթևեկութիւնը ահագին վնաս էր բերում, բայց դրա փոխարէն նրա հակառակորդների նաւերը դատարկ էին գնում-գալիս:

Լարսէնի հակառակորդները սակագները աւելի ցածրացրին, ճանապարհորդների և ապրանքատէրերի որոշ մասը դէպի իրենց գրաւեցին. Լարսէնը իսկոյն յայտարարեց ձրի երթևեկութիւն: Հակառակորդների նաւերը կրկին դատարկեցին:

Մրցումը վերջացաւ նրանով, որ Լարսէնի հակառակորդները քայքայեցին և նրանց նաւերը աճուրդով ծախեցին: Լարսէնը չէր կարող սնանկանալ. ճիշտ է, նա մօտ 15 միլիոն ուռբլի վնաս կրեց, բայց այդ ոչ մի նշանակութիւն չէր կարող ունենալ մի մարդու համար, որի կարողութիւնը եօթ հարիւր միլիոնի է հասնում:

Այժմ նա այդ գծի միակ տէրն է: Հակառակորդներին քայքայելուց յետոյ նա նորից բարձրացրեց սակագները և կէս տարւայ ընթացքում լրացրեց ամբողջ վնասը: Ասպարիզում մենակ մնալով՝ այժմ ամեն բան իր ուզածի պէս է տնում:

Նոյն բանն ուզում է մեր գլխին խաղալ. ինքներդ դատեցէք, ուսուցչապետ, ինչ կարող են անել խեղճ ու կրակ նաւաստիները:

— Այդպէս, այդպէս, մտախոհ մրմնջաց ծե-

րունի գիտնականը: Երբեմն ես հետաքրքրուում էի այդ կեանքով, յատկապէս ուսումնասիրեցի քաղաքատնտեսութիւնը... բայց երբէք չէի կարծում, որ կապիտալիզմը այդքան արագ կարող էր զարգանալ:

— Օգնեցէք մեզ, ուսուցչապետ:

— Կորբոյլդ, դուք երեխայ չէք, քնքշաբար ասաց գիտնականը յուզւած նաւաստիին: Որքան ես հասկանում եմ, ձեզ միայն մի կերպ հնարաւոր է օգնել՝ ձեր կօօպերատիւ ընկերութեանը յանձնել այնքան փող, որ նա ամեն տեղ մրցում առաջ բերէ և սնանկութեան հասցնէ Լարսէնին, կամ թէ ժողովրդական բանկ հիմնել: Իսկ դրա համար հարկաւոր է մի քանի հարիւր միլիոն դրամագլուխ, որը, դուք լաւ գիտէք, ես չունիմ. իմ սեփական կարողութիւնը մի միլիոնի էլ չի հասնում:

— Դուք, իբրև գիտնական՝ մեծ հեղինակութիւն ու ժողովրդականութիւն ունիք:

— Ոչ այնչափ, ինչպէս կարծում էք, Կորբոյլդ. բայց եթէ այդքան մեծ ու հեղինակաւոր գիտնական էլ լինէի, դարձեալ անզօր կըլինէի մի բան անել այդ պայմաններում: Ազդել այդպիսի մարդու խղճի վրայ, ինչպէս Լարսէնն է, իմ կարօթքով անհնարին է:

— Շատ պարզ է այդ, պ. ուսուցչապետ: Բայց դուք գուցէ մի ելք կարողանաք գտնել: Կապւած պայմանի համաձայն մեր նաւերը կէս տարւայ փոխադրելու ապրանք ունին: Գուցէ

կարողանանք Լարսէնի դէմ մրցել եօթ-ութ ա-  
միս... Ուրեմն դուք ժամանակ ունիք մի ելք  
մտածելու մեզ համար:

— Դժւար թէ հնար լինի մի բան անել,  
Կորբոյլը. մի պատահական դէպք միայն կարող  
է օգնել ձեզ:

Ջիմ Կորբոյլը, որ ուսուցչապետի սանիկն  
էր և ծովային կօօպերատիւ ընկերութեան հիմ-  
նադիրը, ծանր հոգոց քաշելով դուրս եկաւ կրն-  
քահօր սենեակից: Ուսուցչապետը տխուր  
հայեացքով ճանապարհ դրեց նրան և ապա սե-  
ղանի վրայից վերցրեց զիրքը, որը հոգեբուժու-  
թեան վերաբերեալ մի սուլար աշխատութիւն էր,  
և խորասուզեց ընթերցանութեան մէջ:

Այն, դժւար գործ է, մրմնջաց նա, մի  
վայրկեան ընդհատելով ընթերցանութիւնը: Ոյժը  
լեռներ է շարժում: Ժամանակիս ոյժը կապիտալն  
է: Ոսկու ոյժը կոյր է, յաճախ վայրենի և արիւ-  
նարբու... հետաքրքիր է, թէ մօտիկ ապագայում  
կեանքն ինչ ձև կըստանայ, երբ Լարսէնը և  
նրա նմանները աշխարհի տէրը կըդառնան և մը-  
նացած մարդկանց իրենց վարձկան ստրուկները  
կըդարձնեն:

Կապրե՛նք ու կըտեսնե՛նք:

Բայց ես հոգուս ամբողջ ուժով ցաւում  
եմ Կորբոյլի ու նրա ընկերների համար, և եթէ  
այդ միայն կախլած լինէր ինձանից...

Ծերունի գիտնականը նորից տարւեց գի-

տական աշխատութեան ընթերցանութեամբ. կա ը-  
ծես մոռացաւ աշխարհի գոյութիւնը:

\* \* \*

Անցաւ մօտ երկու ամիս: Լրագիրները աղ-  
մրկում էին «Շոգենաւային ընկերութեան» կա-  
տարած շահատակութիւնների մասին, որի ղե-  
կավարն էր Լարս Լարսէնը և որը գործում էր բո-  
լոր մանր ու խոշոր ձեռնարկութիւնների դէմ,  
որոնք դեռ չէին ենթարկւել նրա հարւածին:

Եւրոպան յուզւած էր. Լարսէնը սպառնում  
էր Հին և Նոր աշխարհների միջևնաւազնացութիւնն  
իր ձեռքն առնել. իսկ այդ վտանգաւոր էր ծովային  
պետութիւններին ոչ միայն տնտեսապէս, այլև  
քաղաքական տեսակէտից. պատերազմի դէպքում  
տազնապալի ըուպէին նրանք զրկւած կըլինէին  
առևտրական նաւերից օգտւելու հնարաւորու-  
թիւնից՝ զօրք և ռազմամթերք տեղափոխելու հա-  
մար:

Պետութիւններից մի քանիսը մասնակի մի-  
ջոցներ ձեռք առան այդ մրցումը թուլացնելու.  
օրինակ՝ նրանցից մի քանիսը արգելեցին ամե-  
րիկական նաւերին մտնելու իրանց նաւահանգիստ-  
ները. ոմանք առանձին վարձատրութիւններ էին  
տալիս իրենց աղգային նաւերին ֆլատանքը ծած-  
կելու համար և այլն: Ամեն տեղ հասարակական  
կարծիքը վրդուված էր:

Այդ իրարանցումի օրերին էր, երբ ուսուց-

չապետի ծառան յայտնեց, թէ Լարս Լարսէնն ուզում է տեսնել նրան՝ խորհրդակցելու իր որդու առողջական դրութեան մասին:

Առաջին անգամ ուսուցչապետը չ'ընդունեց նրան և ծառայի միջոցով յայտնեց, թէ նա հիւանդներ չի ընդունում բացի այն հիւանդներից, որոնք բացառիկ հետաքրքրութիւն են ներկայացնում գիտութեան համար:

Ծառան յետ գալով ասաց, թէ Լարսէնը պատրաստ է բժշկական քննութեան համար հազար ուրբի վճարել:

— Ասացէք, որ նա այստեղից շուտով կորչի, բարկացաւ ծերունի գիտնականը. բայց դեռ ծառան դռանը չէր հասել, երբ գիտնականը կարծես նոր գիւտ արած՝ կանգնեցրեց նրան.

— Ո՛չ, սպասեցէք, ասաց նա. ընդունեցէք ու յայտնեցէք, որ ես այս ըոպէիս կը գամ:

Հինգ ըոպէից յետոյ գիտնականն ու միլիարդերը նստած առանձին ընդունարանում՝ զրուցում էին:

Նա պատմում էր, թէ որդին վախկոտ է, քաշում է հասարակութեան մէջ դուրս գալ. մտնում է մի անկիւն, ամբողջ ժամերով լուռ նստում. ծեծի սպառնալիքով միայն հնար է լինում նրան հանել այնտեղից: Վախում է ուրիշ երեխաների հետ խաղալ, ձի կամ կառք նստել: Հրացանի ձայն լսելիս՝ քիչ է մնում ուշաթափ լինի: Մի անգամ մի սպանւած թռչուն է տեսել, երկար ժամանակ երեխայի պէս լաց է եղել:

— Այդ բոլորը ինձ դուր չի գալիս, աւելացրեց հարուստը: — Ես ցանկանում եմ, որ իմ որդին ինձ նման անվախ լինի: Ես դեռ ոչ ոքից և ոչնչից չեմ վախեցել:

— Բացի մեծ, սեւ մրջիւններից, — տարօրինակ ձայնով արտասանեց ուսուցչապետը, շեշտակի նայելով նրա աչքերին:

— Բացի մեծ, սև մրջիւններից, մեծ, անձոռնի, սև մրջիւններից, — կրկնեց երկու անգամ ուսուցչապետը առանձին արտայայտութեամբ, հայեացքը չը հեռացնելով խօսակցի աչքերից, որ սպրդնել, սպիտակ կտաւի գոյն էր ստացել:

Այդ խօսքերից յուզւած հարուստը տեղից վեր թռաւ և վայրենի հայեացքով նայեց չորս կողմը:

— Ասում եմ ձեզ, որ կեանքումս ոչ ոքից և ոչնչից չեմ վախեցել. ոչ մարդկանցից, որոնց բախտը ձեռքումս է, և ոչ կենդանիներից կամ միջատներից, ասաց Լարսէնը:

— Բացի սև մրջիւններից, հաստատուն շեշտով ու գլխի շարժումով պնդեց ծերունին կրկին անգամ:

— Ինչո՞ւ էք խօսում սև... սև մրջիւնների մասին. մի՞թէ ձեր տանը միջատներ կան:

— Ահա մէկը դէպի ձեզ է գալիս: Միլիարդերը վեր թռաւ տեղից և կատաղութեամբ տրորեց ստրերի մօտ իբր թէ սողացող միջատին, բայց այդ ամենը շատ ծանր էր նրա համար: Նրա ճակատը ծածկւել էր քրտինքով, ձեռ-

քերը դողում էին, շրթունքները դեղնել էին ու չորացել:

Քիչ հանգստանալուց յետոյ գոռոզ հարուստը նստեց. նա մտածում էր որդու Ֆիզիքական և հոգեկան դրութեան մասին:

Միլիարդերին հանգիստ լսելուց յետոյ ուսուցչապետն ասաց. Ձեր որդին թունաւորւած է. նրան թունաւորել է հայրը, այսինքն՝ դուք, և թունաւորել էք ոսկով, այն ոսկով, որ յափըշտակել էք թշւառներից շնորհիւ ձեր այսպէս կոչւած «Ապրանքատար միութեան», — այդ աւագակաբարոյ ընկերութեան:

Հարուստի աստիճանի տակ կարծես ուռմբ պայթեց. նա հետցով վեր թռաւ և պատրաստ էր յարձակելու ուսուցչապետի վրայ:

— Զգո՛յշ, — կանգնացրեց նրան ուսուցչապետը. — ձեր թևի վրայ մի մեծ սև մրջիւն է սողում:

Լարսէնը անէծքով թափ տւեց թևից միջատին և ոտքով տրորեց:

— Դուք ցնորւած էք. դուք կորցրել էք ձեր խելքը, անպիտան, գարշելի ծերունի, — բղաւում էր նա, բայց չէր համարձակուում մօտենալ նրան. — դուք խաբեբայ էք, շարլատան էք... ես ձեզ ցոյց կը տամ, ես կը սովորեցնեմ. ես...

— Զգո՛յշ. ձեր մազերի վրայով սողում է մրջիւնը:

Հռչակաւոր հարուստը յուսահատ բռնեց

գլուխը, որսաց միջատին և կատաղաբար տրորեց կոշտ մատներով:

— Նստէք, հանգստացէք, ասաց բժիշկ-պրոֆեսորը. այլևս միջատ չկայ: Այդպէս ուրեմն դուք եկաք իմ խորհուրդը լսելու ձեր որդու մասին. բայց դեռ ոչինչ չեմ ասել:

— Դուք ինձ ոչինչ չէք կարող ասել, բացի ձեր գիտնական յիմարութիւնից, — պատասխանեց հարուստը. բայց և այնպէս հնազանդւեց և նստեց ծերունու դիմացը:

— Ձեր որդուն ես, իհարկէ, յանձն եմ առնում բժշկել, բայց...

— Ձեզ կը տամ յիսուն հազար, եթէ որդուս ինձ նման դարձնէք, ընդհատեց նրա խօսքը միլիարդերը:

— Այսինքն:

— Նա իմ միակ ժառանգն է: Եռտով նրան եմ յանձնելու իմ գործերի կառավարութիւնը, այսինքն՝ հարիւրաւոր միլիոն դրամագլուխը. նա պէտք է սովորի միլիոններ աշխատել, լինել հաստատակամ, անյողդողդ, ամեն ինչ կշռահատող, հասկացող, երբէք յարմար դէպքը ձեռքից բաց չը թողնող:

— Յափշտակելու ուրիշների գոյքը:

— Ես երբէք օրէնքի հակառակ չեմ գնացել:

— Նոյն իսկ այն ժամանակ, երբ հազարաւոր մարդկանց զրկում էք աշխատանքից և մի կտոր հացից: Կարելի է օրէնքի գաղափարը

առաձգական է: Սակայն չը վիճենք այդ մասին, իմ ժամանակը թանգ է:

— Իսկ իմ ժամանակը, դուք կարծում էք, էժան է ձերինից, առարկեց խայթոցով հարուստը:

— Ուրեմն լսեցէք. այլ ևս չեմ կրկնելու. ես յանձն եմ առնում բժշկել ձեր որդուն, միայն մի պայմանով...

— Այդ ի՞նչ պայման է:

— Որ դուք բոլորովին թողնէք ձեր առևտրական գործունէութիւնը, վերջ տաք «Ապրանքատար Միութեան»-ը և ձեր հարստութեան որոշ մասը նւիրէք բուժելու այն վէրքերը, որ հասցրել էք ձեր մերձաւորներին, այսինքն՝ շինէք մարդկութեան համար օգտակար գիտութեան ճեմարաններ, համալսարաններ, գրադարաններ, հիւանդանոցներ, դպրոցներ, ժողովրդական բանկեր հիմնէք, նոր ճանապարհներ շինէք, չորացնէք վատառողջ ճահիճները...

— Ի՞նչ... ի՞նչ. խեղդւելով վեր թռաւ տեղից խոշոր դրամատէրը, Ոչ, դուք կատարելապէս գժւել էք ծերութեան օրերում: Գուցէ կը հրամայէք, որ ես իմ վերջին շապիկը տամ ուրիշին:

— Ո՛չ. շապիկը կարող էք ձեզ համար թողնել, — հանգիստ պատասխանեց ծերունին: — Ես հակառակ չեմ լինի, եթէ տասը, քսան միլիոն թողնէք ձեզ, կամ ձեր ժառանգին. բայց մնացածը դուք պէտք է գործադրէք այնպէս, ինչպէս վարւեց ձեր նախկին գործակից ընկերը, պարոն Կարնէջին, որ իր կենդանութեան ժամա-

նակ հարիւր միլիոններ նւիրեց բարեգործական հիմնարկութիւններին:

— Այն ցնորւածը, ինչպէս դուք:

— Այո, փողի խելագարութիւնից բուժւած այն մարդը. նոյնպէս կը բուժւիք և դուք երեք ամսից յետոյ:

Այդ ասելով՝ ուսուցչապետը վեր կացաւ և մտաւ իր առանձնասենեակը. իսկ Լարսէնը կատաղած դուրս գնաց, հայտնելով բժշկին էլ, գիտութիւնն էլ, ամբողջ աշխարհն էլ:

Վերադառնալով տուն Լարսէնը նորից սկսեց իր աշխատանքները, այն է՝ «Ապրանքատար միութեան» գործունէութիւնը ընդարձակելու նոր ծրագիրներ մշակել:

Առաջին երկու օրը բոլորովին խաղաղանցաւ: Երրորդ օրը Միութեան նիստն էր նշանակւած, որին ներկայ էին լինելու գործակիցներն ու բարձրաստիճան ծառայողները: Լարսէնը նստաւ աւտոմոբիլը և գնաց ժողովի. ճանապարհին նա մշակում էր իր ծրագիրների մանրամասնութիւնները: Երբ լուցկին գրպանից հանեց և վառեց սիգարը կպցնելու համար, նրան թւաց, որ իր վրայ նստած է մի սև մըջիւն, որը կարծես ծաղրելով շարժում էր շօշափուկները: Լարսէնը սարսափից քար էր կտրել:

Վառւած լուցկին վայր ընկաւ նրա ձեռքից. նա մնաց մթութեան մէջ: Այն միտքը, թէ լուցկու հետ միասին վայր ընկաւ և մըջիւնը, որ հիմա սողալով վեր կը բարձրանայ ոտքի վրայով,

ասեղի նման ցցւեց նրա բորբոքւած, յուզւած ուղեղում:

Նա ցնցւեց ամբողջ մարմնով, զանգահարեց կառապանին, որ աւտոմոբիլը կանգնացնի և խկոյն իջաւ ու կանգնեց փողոցի մէջ տեղը:

— Մըջիւնը, այնտեղ է անիծւած սև մըրջիւնը, — դողում էր նա ամբողջ մարմնով և գոռում վախեցած շոֆերի վրայ, որը ոչինչ չը հասկանալով զարմացած նայում էր իր տիրոջը:

— Գտիր, թշուառական, եթէ ոչ այս բոպէիս բեզ կարծակեմ, ապուշ, հաստապիղ:

Շոֆերը զարմացաւ, որ իր տէրը վախում է մըջիւնից, արագ մտաւ աւտոմոբիլը մըջիւնը գտնելու, բայց այնտեղ միայն կիսայ շած լուցկին գտաւ. սակայն Լարս Լարսէնը չէր էլ ուզում լսիլ, թէ անկարելի է գտնել մըջիւնին:

Նա այն աստիճան զայրացաւ, որ կառապանին խփեց փայտով:

Երիտասարդ շոֆերը, որի համար այդ անհասկանալի էր, և որը նրան յանկարծակիի բերեց, չը դիմացաւ այդ վիրաւորանքին և պատասխանեց նրան բռունցքի հարւածով. Լարսէնը վայր ընկաւ և ապա բարձրանալով նորից յարձակեց շոֆերի վրայ, որը չէր բաշուում նրան դիմադրելուց. սակայն մի քանի բայլ հեռաւորութեան վրայ կանգնած ոստիկանը մօտեցաւ և բաժանեց նրանց:

— Նա դիտմամբ է սև մըջիւնին ձգել աւտոմոբիլը, — փրփուրը բերանին գոռում էր հարուստը,

ցոյց տալով շոֆերի վրայ. բանտ տարէք դրան:

— Նա խելագարւել է, — պատասխանում է շոֆերը: Ինքներդ տեսնում էք, ոստիկան, որ այդ մարդը յանկարծակի ցնորւեց և վտանգաւոր դարձաւ մարդկանց համար: Եթէ դուք հարկաւոր էք համարում ես կրգամ ոստիկանատուն արձանագրութիւն կազմելու համար: Բայց ի նկատի առէք, որ ես ձեռքով եմ պատասխանել նրա փայտի հարւածին. այդ էր իմ երեք տարւայ հաւատարիմ ծառայութեան վարձը:

Ոստիկանը դժւար կացութեան մէջ էր. մէկ կողմից նա չէր կարող անտես առնել Լարսէնի խօսքը, որ Յ.մերիկայի փողի անթագակիր թագաւորներից մէկն էր, միւս կողմից նրա վարմունքը լուրջ կասկած էր յարուցանում, թէ արդեօք նրա խելքը գլխին է:

Բարեբախտաբար ինքը Լարսէնը վերջ դրեց այդ կացութեան. շոֆերին վճարեց հարիւր ուրբի նրան փայտով հարւածելու համար և աւտոմոբիլը տուն ճամբեց, իսկ ինքը մի ուրիշ աւտոմոբիլ վարձեց և շարունակեց ճանապարհը:

Սակայն Լարսէնը դեռ աւտոմոբիլը չէր նրստել, երբ ամբոխի միջից մի ծերունի մօտեցաւ նրան և ականջին փսփոսաց.

— Այդ ես եմ, Ուիչերլէյը, յիշում էք, որ ես ձեզ ասում էի, թէ դուք բժշկութեան անելի մեծ կարիք ունիք, քան ձեր որդին: Յտեսութիւն. դուք ինձ կը կանչէք ձեզ բժշկելու:

Լարսէնը բարկութիւնից կատաղեց. ուզում

էր հայհոյանքների կարկուտ թափել այդ «յանդուզն շառլատանի» գլխին, ինչպէս նա անւանում էր գիտնական ուսուցչապետին իր մտքում, բայց զսպեց իրան և հրամայեց շոֆերին առաջ շարժել աւտոմոբիլը:

Նիստը փոթորկալից էր. Լարսէնը սաստիկ ջղայնացած էր. ամենափոքրիկ առարկութիւնը նրան կատաղութեան էր հասցնում. ամեն մի նկատողութիւն իբրև անձնական վիրաւորանք էր ընդունում, որին պատասխանում էր փոզոցային հայհոյանքներով:

Միութեան անդամների մեծ մասը իրեն անպատւած և վիրաւորած զգաց Լարսէնի անվայել և կոպիտ վարմունքից. ընդհանուր գայրոյթը այնքան մեծ էր, որ հին վարչութիւնը հրաժարւեց, ընտրւեց նորը, որի մէջ մտան մեծ մասամբ Լարսէնի հակառակորդները, որոնք խիստ քննադատում էին նրա դաժան ծրագիրները:

Գոռոզ ու Եսասէր միլիոնատէրը չըկարողացաւ տանել այդ հարւածը և ուշաթափ եղաւ:

Իսկոյն կարգադրեցին բժիշկներ հրաւիրել:

Մինչ շրջապատողները Լարսէնին հանգրտացնում էին թէ շուտով բժիշկ կը գայ ու նրան կը բժշկի, նա ցասկոտ ձայնով գոռաց. «միայն թէ Ուիչերլէյը թող չըգայ: Ում ուզում էք կանչեցէք, բայց նա չըլինի: Ես վախում եմ այդ ծերունուց, այդ կախարդից...»

Միլիոնատէրի տարօրինակ վախը և անօրի-

նակ վարմունքը ենթադրել էին տալիս, որ նա աննորմալ դրութեան մէջ է:

Լարսէնի թշնամիները օգտւելով այդ հանգամանքից ամեն տեղ տարածում էին նրա հիւլանդութեան վտանգաւորութեան և ձեռնարկութիւնների ձախորդ ընթացքի մասին, այնպէս որ նրա ակցիաների գները բաւական ընկան:

Երբ Լարսէնին տարան տուն, նա իրեն այն աստիճանի լաւ զգաց, որ մերժեց որևէ բժշկական օգնութիւն ընդունել:

— Ես հիւանդ չեմ, — յամառօրէն պնդում էր նա: Նեարդերս բիշ գրգռւել էին, ուրիշ ոչինչ. ես գիտեմ բժշկւելու միջոցը: Հարկաւոր է շարունակ աշխատել. աշխատանքը ամենալաւ միջոցն է նեարդերը հանգստացնելու համար:

Իրաւ որ նրա ջղերը հանգստացել էին. մի ամբողջ շաբաթ նա դուրս չէր գալիս իր առանձնասենեակից և ամբողջ օրերով աշխատում էր՝ նոյնիսկ առանց ճաշելու: Կոխ էր մղում իր հակառակորդների դէմ, որոնք աշխատում էին ակցիաների գները գցել:

Շաբաթւայ վերջին ակցիաների գները սկսեցին բարձրանալ. տաճնապն անցաւ:

Բայց էժան չընստեց այդ շաբաթւայ լարւած աշխատանքը «շոգենաւային թագաւորին»՝ նա բոլորովին կորցրեց քուէնը և գիշերները թափառում էր ու ինքն իրեն խօսում:

— Միայն թէ Ուիչերլէյը չըլինի. ինչ բժիշկ ուզում էք հրաւիրեցէք, բայց ոչ Ուիչերլէյին»

Ուրիշերէյը կախարդ է: Նա զրտեղից իմացաւ, թէ ես վախենում եմ... սև մըջիւններից: Ես ոչ ոքից չեմ վախենում աշխարհում, նոյնիսկ ամենամեծ սև մըջիւններից. այսպէս խօսում էր նա ինքն իրեն, երբեմն էլ անկապ խօսքեր արտասանում:

Իր տան պահապաններին Լարսէնը խիստ պատուէր էր տւել՝ տուն չըթողնել ուսուցչապետ Ուրիշերէյին:

Մի օր երեկոյեան ատրճանակի անընդհատ պայթոցները ոտքի հանեցին Լարսէնի ամբողջ տունը: Երբ մտան նրա առանձնասենեակը, որտեղից լսուում էին տրաքոցները, տեսան, որ նա ամեն ուղղութեամբ ատրճանակ է արձակում և կատաղաբար գոռում.

—Ուրիշերէյ. անա... ես բռնեցի քեզ, դու ես թունաւորել. դու մտար հայելը յետևը, բայց ես քեզ կը սպանեմ...

Հայելու կտորները ատրճանակի հարւածներից զրնգալով այս ու այն կողմն էին թափւում:

Հոգեկան տագնապը շարունակւեց համարեա ամբողջ գիշերը, որին հետևեց ուշաթափութիւնը: Երբ Լարսէնը ուշքի եկաւ, կատարեալ ջարդւած էր գգում իրան:

—Հրաւիրեցէք ուսուցչապետ Ուրիշերէյին,— թոյլ, բայց հանգիստ ձայնով մըմնջաց նա գիտակցութիւնը պարզւելուց յետոյ. նա միայն կարող է ինձ փրկել...

Երբ ուսուցչապետն եկաւ, Լարսէնը իր

առանձնասենեակից հեռացրեց ամենքին և մնաց մենակ հոգեբուժի հետ:

Թէ ինչ խօսեցին նրանք մի ամբողջ ժամաւայ ընթացքում—ոչ ոք չիմացաւ: Բայց երբ ուսուցչապետը պատրասուեց գնալ, գոռոզ միլիոնատէրը ուղեկցեց նրան մինչև դուռը, իր ձեռքով բացեց դռները: Նոյնիսկ Միացեալ Նահանգների նախագահին այդպիսի պատիւներ չէր տայ Լարս Լարսէնը:

—Պատրասուիր, որդիս, վաղը մենք կը հեռանանք այստեղից,—քնքոյշ տոնով դիմեց նա մի անկիւն քաշւած իր որդուն, ուսուցչապետին ճանապարհ դնելուց յետոյ:

—Ո՛ւր, հայրիկ,—հարցրեց որդին, որի աչքերը ուրախութիւնից սկսեցին փայլել:

—Կիւղ. այն բարի ծերունու փոքրիկ կալուածքը, որը քեզ և ինձ բժշկելու է. նրա անունն է ուսուցչապետ Ուրիշերէյ: Նա, զաւակս, անլանի գիտնական է և մեծ մարդ:

Եւ նրանք գնացին:

Նոյն օրը ամբողջ քաղաքում լուր տարածւեց, որին սկզբում ոչ ոք չէր հաւատում, թէ Լարս Լարսէնը ուզում է հետևել իր ընկեր կարնէշիի օրինակին. իր բոլոր ձեռնարկութիւնները կօօպերատիւ հիմնարկութիւնների է վերածում, որին մասնակցելու են բոլոր ծառայողները: Ստացած ահագին գումարները գործադրելու է կուլտուրական ձեռնարկութիւնների:

Նախ ուզում է կազմակերպել այն հիմնար-

կութիւնները, որոնք ապահովելու են շոգեհա-  
ւային ձեռնարկութիւնների մէջ — ծառայողների  
գոյութիւնը:

Բացի դրանից նա բանակցութեան մէջ է  
մտել Պաստեօրի ճեմարանի հետ և առաջարկում է  
ճեմարանին խոշոր գումար նուիրել, որպէսզի  
ուսումնասիրելի բորոտութիւնը և ուրիշ նման  
վարակիչ հիւանդութիւններ: Նրա միջոցներով  
հիմնուում է և կահաւորուում Նիւ-Յօրքում պաս-  
տեօրեան մի նոր ճեմարան, մի քանի տասնեակ  
հիւանդանոցներ զիւղերում, հարիւրաւոր երկսեռ  
երկդասեան դպրոցներ, մանր վարկային ընկե-  
րութիւններ, մի շարք ժողովրդական հրատարա-  
կութիւններ և այլն և այլն:

Մի ամառայ ընթացքում բոլորովին առող-  
ջացաւ Լարս Լարսէնը: Նա համարեա ամբողջ  
օրն անց էր կացնում ծերունի ուսուցչապետի  
փոքրիկ պարտիզում, նրա հետ զրուցելով:

— Եթէ ինձանից միլիոններ պահանջէք, պա-  
րոն ուսուցչապետ, ես չեմ խնայիլ և առանց  
ձայն հանելու կըյանձնեմ ձեզ: Եւ զիտէք ինչու: Նրա  
համար, որ դուք բաց արիք իմ աչքերը, բժշկե-  
ցիք ինձ «ոսկու ցաւից»: Այժմ եմ հասկանում,  
թէ որն է իսկական կեանքը: Բայց ձեր արած  
լաւութիւնը այդ չէ միայն:

Դուք փրկեցիք և իմ որդուն, որին ես ան-  
շուշտ կը փչացնէի, եթէ դուք չլինէիք: Ոսկին  
ես ամեն բանից բարձր էի համարում աշխար-  
հում և ուզում էի, որ որդիս էլ նոյն կերպ

նայէր, այսինքն՝ միայն մտածել, թէ ինչպէս  
պէտք է նոր ու նոր գումարներ դիզել, որ եր-  
բեմն չես էլ իմանում, թէ ինչիդ վրայ գործա-  
դրես:

— Է՛հ, ուսուցչապետ, քանի որ ամեն բան  
անցել, գնացել է, պատմեցէք, խնդրեմ, թէ ի՞նչ  
պէս արիք, որ ես այնպիսի գրութեան մէջ  
ընկայ:

— Շատ պարզ, պատասխանեց ծերունին.  
Եթէ ես հաստատ համոզւած չը լինէի, որ այդ-  
պէս վարւելով միմիայն ձեր անձնական շահն  
ունեմ ի նկատի, չէի գործադրի բժշկութեան  
լիմ եղանակը: Դուք հիպնոսացել, ներշնչուել և  
թունաւորուել էիք ոսկով, ես էլ այլ կերպ չէի  
կարող վարւել, և հիպնոսացրի— ներշնչեցի ձեզ:

Երբ եկաք ինձ մօտ խորհրդակցելու ձեր  
որդու մասին, ես օգուեցի այդ հանգամանքից:  
Ես իսկոյն նկատեցի, որ ձեր նեարդային համա-  
կարգութիւնը քայքայւած է: Այդպիսի մարդիկ  
շուտ են ենթարկուում հիպնոսի: Դուք պարծենում  
էիք, որ ոչ ոքից և ոչնչից չէք վախենում: Ես  
պատժեցի ձեզ, ստիպեցի վախենալ սև մըջիւն-  
ներից և տեսնել այդ անվտանգ կենդանիներին  
ամեն քայլափոխում. և ապա ներշնչեցի, որ ա-  
մեն տեղ տեսնէք ինձ, իսկ այդ բանը հասցրեց  
ձեզ նեարդային տագնապի:

Հոգեկան այդ տագնապը ստիպեց ձեզ  
ուշքի գալ, հասկանալ, որ դէպի կորուստ էք  
դիմում:

Այնուհետև առանց իմ ազդեցութեան որոշեցիք կանչել ինձ և խօսել հետո: Նոյնպէս կամաւոր կերպով լսեցիք իմ խորհուրդները՝ թողնել անցեալ կեանքը, փողի յետևից քաշ դալը և նրան ծառայելը:


Իսկ բժշկել ձեզ այն ամեն հետևանքներից, որ թողել է ձեզ վրայ ձեր անցեալ կեանքը, այնքան էլ բարդ գործ չէ: Միայն յիշեցէք մի բան. դուք քայքայել էք ձեր կազմաւածքը տասնեակ տարիների ընթացքում՝ ամենավատառողջ պայմաններում ապրելով. իսկ կարճ ժամանակում ազատել այդ ամենից—բացարձակապէս անհնարին է: Դուք տղամարդ էք, պարոն Լարսէն, և ես կարող եմ ձեզ հետ պարզ խօսել. մինչև ձեր կեանքի վերջը դուք կունենաք որոշ ցաւեր, որ պտուղ են ձեր անցեալ գործունէութեան:

—Յամենայն դէպս ես ուրախ եմ, որ դուրս եկայ այն կեանքից. դրա փոխարէն իմ որդուն կը կրթեմ բոլորովին այլ պայմաններում և այլ հայեացքներով, և դուք, ուսուցչապետ, բարբ կը լինիք այդ գործում ինձ օգնելու:

—Անշուշտ, պատասխանեց ծերունի դիտնականը, սեղմելով հարուստի ձեռքը:

Յ. Գ. Քանի քանի հարուստներ ապրում են նոյն եսական կեանքով, դիզում հազարներ, միլիոններ և չեն մասնակցում հասարակական ոչ մի օգտաւէտ ձեռնարկութեան:

Աղքատի հառաչանքը, որբի լացը, ժողովրդի ցաւը, հայրենիքի տառապանքը կենդանութեան ժամանակ չեն յուզում նրանց. իսկ մահուան անկողնում սովորական կտակով մի քանի կողէկ անգլիտակցաբար շարտում են բարեգործական նպատակով՝ ի փրկութիւն իրենց չարատանջ հոգու:



ՀՐԱՏ. ԱԺ. Ա. ԲՈՒԳՈՒՂԵԱՆԻ

Հայ ազգային 400 եւ արտերի Գիւտի 1500-ամնայ  
յոբեկանի յիւսակի

- |   |       |
|---|-------|
| 1) Կորած Սարը և<br>Ոսկէ Կուտքի գանձը    | 20 Կ. |
| 2) Փորրիկ պատմաւորներ                   | 20 »  |
| 3) Գորիլա և ուրիշ պատմաւորներ           | 20 »  |
| 4) Երեք պատմաւոր                        | 20 »  |
| 5) Անտառի զաւակները և ուրիշ պատմաւորներ | 20 »  |
| 6) Կրթական ճանապարհորդութիւն            | 20 »  |
| 7) Պէտք է հետեւ                         | 20 »  |
| 8) Օրիորդ Ֆրիկետտա.                     | 20 »  |
| 9) Զօրագետ Տեմպետտան                    | 20 »  |
| 10) Ալկմանարի ոսկին                     | 20 »  |

Մամուլի տակ է

11) Զօրավարի ընձան



« Ազգային գրադարան



NL0165829

